№ 1 (214) XXI ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1911

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՀՈՎԵՐ

Կեանքի ալիքը սկսում է բարձրանալ—հինգ տարուայ մռայլութիւնից յետոյ։ Դեռ թո՛ղ է նա, չափազանց վտիտ՝ բռնապետական ահարկու ոսոխի հանգէպ, բայց և այնպէս խռովում է արդէն հանգստութիւնը պետերբուրգեան կամարիլլայի, որ վերստին հրապարակ է նետում իր սիւններն ու գնդացիրները... ուսանողական խլրտումների փոքրիկ հրդեհը հանգցնելու համար։

Կոզակները գրոհ են տալիս ցուցարարների խմբերի դէմ և համալսարանի շէնքերը նորէն ոռոգւում են արիւնով...

Ուսանողներն են... Նոյն անդասակարգ դասակարգը, որ սկզբից էլ՝ եղել է միշտ առաջապահը ազատագրական շարժումների։ Դարձեալ ուսանողները... Եւ նոյն միջոցին, երբ այդ ըմբոստ ու անձնուրաց, երիտասարդ հոգիները զանգւածօրէն փողոց են նետւում և կուրծք տալիս սիւններին, նոյն միջոցին, երբ նրանք իրենց ցասումն ու արհամարհանքն են ժայթքում համառուսական դահիճներին, Սազոնովի ողբերգական վախճանի առթիւ—նոյն միջոցին Վիեննայի ռուս սոցիալ-դեմոկրատական մի ճշմարտախօս ու „հերձւած-խմբի" օրգանը „Պրավդա" անունով, հրատարակում է ի լուր ամբողջ յեղափոխական Ռուսաստանի մի չափազանց ուշագրաւ ա ն կ ե տ, որով հաստատում է պրոլետարական զանգւածների սարսափեցուցիչ անտարբերութիւնը, նրանց կատարեալ բացակայութիւնը կազմակերպական-յեղափոխական շրջանակներից։ Աւելի ևս նշանակալի են „Պրավդա"-ի ստացած այն տեղեկութիւնները—Ռուսաստանի այլևայլ գործարանական քաղաքներից—որոնք միաբերան արտայայտում են աշխատաւոր տարրերի զզւանքն ու յուսախաբութիւնը սոցիալ-դեմոկրատիայի վարիչների, նրա ներքին ֆրակցիական երկպառակութեան, նրա հատւածային ու աղանդամոլ կռիւների ու պառակտումների առիթով...

Ալիքը բարձրանում է...

Եւ դրա համար պէտք էր, որ գերեզման իջնէին Ռուսաստանի պարծանքը կազմող երեք դէմքեր. Մ ո ւ ր օ մ ց ե վ, Տ օ լ ս տ օ յ, Սա զ օ ն օ վ։ Բոլորովին տարբեր դիրքի ու աշխարհայեացքի ներկայացուցիչներ—բայց երեքն էլ անձնաւորում են բողոքը և պայքարը՝ ընդդէմ ասիական, կոզակային բռնակալութեան։

Մուրոմցեվի թաղման օրը կազմակերպւեցին ցոյցեր ու թափօրներ։ Տոլստոյի թաղման ժամանակ թափօրները կրկնւեցին աւելի խոշոր ծաւալով և մտաւորական տարրերի՝ ողբն ու կականը հնչեց աւելի բարձրաձայն, աւելի յուզիչ։ Վերջապէս, Սազոնովի ինքնասպանութեան լուրը շանթի պէս հարւածեց ու ցնցեց ամբողջ մտածող և գիտակցող Ռուսաստանը։ Ցոյցերը վերածւեցին արիւնահեղ ընդհարումների...

Երևոյթը նշանակալի է։ Սազոնով յեղափոխական էր, բառի խորունկ ու ահաւոր իմաստով—և գիտակից երիտասարդութիւնը բոցավառւեց նրա մահւան լուրն առնելով։

Եւ ո՞րպիսի՞ մահ... Մի կատարեալ նահատակութիւն։ Մի ողջակէզ—բառի կլասսիկ նշանակութեամբ։ Մի զոհ, որ գիտակցաբար և յօժարակամ ինքնասպան է լինում, որպէսզի ցոյց տայ արար աշխարհին, թէ որպիսի գազանանոց է ժամանակակից սիբիրեան բանտը, թէ որպիսի քստմնելի ռէժիմի են մատնւած „քաղաքական յանցաւորները"։

Ողջակէզ — և աննման, դիւցազնական։ Վեց տարի սրանից առաջ յուլիս 15 պատմական օրը նա որոշեց ինքզինքը զոհել, որպէսզի երկիրը ազատւէր ամենադժնդակ բռնաւորից։ Նա սլացաւ իր ռումբով գազան Պլէվէի դէմ, փշրեց լանկթամուրեան նրա գանգը և բաց արեց նոր Յեղափոխութեան դարագլուխ։ Մահւան դատապարտւած՝ արժանացաւ առհարկի „մեղմացումի" և տարւեց Շլիսսելբուրգի Զնդանը։ 1905-ի հոկտեմբերեան „ընդհանուր ներումը" չը հանեց Սազոնովին այդ զնդանից։ Յեղափոխութեան թափը, աւա՜ղ, այնքան հուժկու չէր, որ խորտակէր բոլոր բաստիլները։ Բանտարկեալներից ոմանք պահւեցին իրենց խուցերում — ամենաահեղ, ամենակատաղի տերրորիստները։ Սազոնովը—նրանց շարքերում, առաջին տեղում։

Յեղափոխութեան յաղթանակը կարճատև եղաւ։ Ռէակցիան նորէն մտաւ իր ուժի ու „իրաւունքի" մէջ... և փրփրեց ու ճարակեց։ Սարսափելի է բռնակալութեան վրէժխնդրութիւնը։ „Վտանգաւոր" տերրորիստները ենթարկւեցին բ ա ց ա ռ ի կ ռ է ժ ի մ ի։ Ամենից առաջ

պէտք էր ջնջել նրան, Սազոնովին... Եւ հոյակապ ռմբաձիգը փակւեց Զարանտոյի տարտարոսում։ Այնտեղ ամեն օր նրա աչքերի առջև մտրակահարում էին ընկերների մերկանդամ մարմինները և ողբի, յուսահատութեան բառաչիւնով դղրդացնում բանտերը։ Ձէին խնայում և իրեն — Սազոնովին։ Ծեծ, անարգանք և դիւային հեգնութիւն, բոլոր մարդկային արժանաւորութիւնների ցինիկական ոտնահարում... Եւ այդ բոլորը՝ հրահանգւած „ի վերուստ“, ալքայական պալատներից։ Եւ այդ բոլորը —սիստեմատիկ, կանոնաւոր, անդադրում։

Հերոսի հոգին չը հանդուրժեց այդքան նախատինք և նա ընդունեց եղերական որոշումը... Ինչպէս որ վեց տարի առաջ զոհաբերում էր ինքզինքը՝ շղթայակապ երկիրն ազատագրելու միտումով, այնպէս և նա որոշեց զոհաբերւել—այս անգամ, աւա՜ղ, յաւիտեան—որպէսզի իր անօրինակ ինքնասպանութեամբ ցնցէ Ռուսաստանի ու աշխարհի խիղճը և փոքր ինչ մեղմէ բանտային ռէժիմը, փոքր ինչ բարւոքէ իր դժբախտ ընկերակիցների վիճակը...

Սազոնովի իղձը մասամբ կատարւեց։ Ցուզւեց ոչ միայն Ռուսաստանը, այլ և ամբողջ լուսաւոր աշխարհը. յուզւեցին՝ որքան ընդունակ էին յուզւելու։ Հարցապնդում Դումայի մէջ։ Բազմամարդ միտինգներ և ցասկոտ բեզոլիւսիօններ՝ Պարիզում և ուրիշ կենտրոններում։ Սազոնովի մահւան բօթը հասնում էր նոյն միջոցին, երբ Շլիսսելբուրգի նախկին բանտարկեալ հռչակաւոր Վերա Ֆիգները ագիտացիական պտոյտ էր անում արևմտեան Եւրոպայի մէջ և պատմում էր հսկայ, ուշադիր լսարանների առջև՝ ռուս բանտային չարչարանքները։

Հանրային կարծիքը խլրտաց, բողոքեց։ Բայց ի՞նչ է նրա արժէքն ու ազդեցութիւնը... Ընչին—տարաբախտաբար։ Երկրի մէջ է, որ պիտի խլրտար 5 տարուց ի վեր թմրած, մեռած գիտակցութիւնը։

Ուսանողութիւնը հրապարակ նետւեց։ Մենա՛կ, անզէն և անպաշտպան—ինչպէս վաղեմի օրերում։ Պրոլետարիատը —անուժ, անձայն։ Գիւղացիութիւնը — խուլ, անկարեկիր։ Սև Դուման իր „հոկտեմբերեան“ մեծամասնութեամբ, բնականաբար, պարսաւանքի խօսք միայն ունէր ուսանողութեան այդ ազնիւ ըմբոստացումի հանդէպ։ Իսկ կադէտները „խոհեմութեան“ ու „շրջահայեցութեան“ խրատներով ձգտում էին արգելք լինել՝ անգամ այդ փոքրիկ ցոյցերին, անգամ այդ տրաժիկ, ողբերգական պայմանների մէջ...

Ա՛հա Ռուսաստանի ժամանակակից պատկերը։ Նա այն չէ, այնուամենայնիւ, ինչ որ տեսնում էինք վերջին մեռեալ թւականներում։ Մի բան փոխւած է։ Նոր ու թարմ սերունդն է, որ կատարում է աւանգարդի, առաջապահի պաշտօնը այս անգան Զարթնումի մէջ։ Նոր, գաղափարական սերունդը, որ չի ճաշակել 1905—1906-ի հարւածներն ու յուսախաբութիւնները.. Ուսանողական շարժումը չի ընդհատւում. նա գրաւել է բոլոր համալսարանական քաղաքները։ Այս անգամ ևս գուցէ նրան վիճակւած է նախակարապետ լինելու աւելի ընդարձակ շարժումների...

Կուսակցութիւնները ևս տենդոտ կերպով վերակազմւում են, վերաքննում իրենց տակտիկը, ճշգնում իրենց ռազմական գրականութիւնը։ Ճնում է միւս կողմից դանդաղ, աստիճանաբար, միջկուսակցային համերաշխութեան պրօպագանդը։ Բազմանում են ամենուրեք, բոլոր գործող հատւածների մէջ, անհատներ, որոնք, գիտակ իրականութեան պահանջների, քարոզում են մի կողմ թողնել թէօրիական ու անձնական ճղճիմ բանակռիւները և կենտրոնացնել ճիգերը բուն գործնական, յեղափոխական աշխատանքի վրայ։

Դժգոհների և յեղափոխականների բանակին աւելացան—վերջին պետական հարւածից յետոյ—և ֆինլանդացիք։ Յեղափոխութիւնից առաջ՝ համերաշխութեան եռանդուն ու համոզւած քարոզիչ էին նրանք,— չեն յապաղի, անտարակոյս, վերստանձնելու նոյն դերը, այժմ, չարաչար պարտութիւններից ու յուսախաբութիւններից յետոյ։ Բոլոր „Ծայրերը“, Օկրայինները բռնւած են անհաշտ ու կատաղի ատելութեամբ դէպի անարգ ու դրուժան կառավարութիւնը, որ ոչինչ, գրեթէ ոչինչ այլևս չը թողեց 1905-ի կայսերական մանիֆէստով հռչակւած ազատութիւններից ու իրաւունքներից։

Նա ինքն է, այդ գաւաճան կառավարութիւնը, որ ամենայն եռանդով փչում է դժգոհութեան ու խմորումի հրդեհը, որի մէջ նա պէտք է շուտով խորտակւի և չքանայ։

SOLUSO3

Մեռաւ մեր ժամանակի ամենամեծ քրիստոնիան և ամենամեծ անիշխանակցը։

Երկու տիտղոսները—քրիստոնեայ և անիշխանական—հաշտւում են այդ տարօրինակ մարդու մէջ և այդ ուշագրաւ համադրութիւնը գուցէ մեծագոյն գաղտնիքն է նրա անսովոր, տիեզերական հմայքի։

Համադրութիւն, սինթեզ—ծայրայեղ կրաւորականութեան և ծայրայեղ յեղափոխականութեան... Գուցէ երբէք — նազովրեցու օրերից ի վեր—հակոտնեաները չեն միացել այդքան սրտառուչ շնաշխարհիկ ներդաշնակութեան մէջ, արտադրելով այնքան հակամարտ տպաւորութիւններ, յարուցանելով այնքան տարբեր գնահատութեան ձև ու չափեր։

Եւ այդ հակամարտ տպաւորութիւնները մոլեգնօրէն բաղխւում էին երէկ՝ մեծ մարդու, մեծ գրողի ու առաքելի գերեզմանի շուրջը։ Նրանք բաղխւում էին նոյնիսկ Երիտասարդ Ռուսաստանի, յեղափոխական Ռուսաստանի լայնածաւալ բանակի մէջ...

Մի կողմից այն պարզ, ցաւոտ ու տանջող գիտակցուսանողական շարժումը չի ընդհատւում. նա գրաւել է բոլոր համալսարանական քաղաքները։ Այս անգամ ևս գուցէ նրան վիճակւած է նախակարապետ լինելու աւելի ընդարձակ շարժումների...

Կուսակցութիւնները ևս տենդոտ կերպով վերակազմւում են, վերաքննում իրենց տակտիկը, ճշգնում իրենց ռազմական գրականութիւնը։ Ճնում է միւս կողմից դանդաղ, աստիճանաբար, միջկուսակցային համերաշխութեան պրօպագանդը։ Բազմանում են ամենուրեք, բոլոր գործող հատւածների մէջ, անհատներ, որոնք, գիտակ իրականութեան պահանջների, քարոզում են մի կողմ թողնել թէօրիական ու անձնական ճղճիմ բանակռիւները և կենտրոնացնել ճիգերը բուն գործնական, յեղափոխական աշխատանքի վրայ։

Դժգոհների և յեղափոխականների բանակին աւելացան—վերջին պետական հարւածից յետոյ—և ֆինլանդացիք։ Յեղափոխութիւնից առաջ՝ համերաշխութեան եռանդուն ու համոզւած քարոզիչ էին նրանք,— չեն յապաղի, անտարակոյս, վերստանձնելու նոյն դերը, այժմ, չարաչար պարտութիւններից ու յուսախաբութիւններից յետոյ։ Բոլոր „Ծայրերը“, Օկրայինները բռնւած են անհաշտ ու կատաղի ատելութեամբ դէպի անարգ ու դրուժան կառավարութիւնը, որ ոչինչ, գրեթէ ոչինչ այլևս չը թողեց 1905-ի կայսերական մանիֆէստով հռչակւած ազատութիւններից ու իրաւունքներից։

Նա ինքն է, այդ գաւաճան կառավարութիւնը, որ ամենայն եռանդով փչում է դժգոհութեան ու խմորումի հրդեհը, որի մէջ նա պէտք է շուտով խորտակւի և չքանայ։

SOLUSO3

Մեռաւ մեր ժամանակի ամենամեծ քրիստոնիան և ամենամեծ անիշխանակցը։

Երկու տիտղոսները—քրիստոնեայ և անիշխանական—հաշտւում են այդ տարօրինակ մարդու մէջ և այդ ուշագրաւ համադրութիւնը գուցէ մեծագոյն գաղտնիքն է նրա անսովոր, տիեզերական հմայքի։

Համադրութիւն, սինթեզ—ծայրայեղ կրաւորականութեան և ծայրայեղ յեղափոխականութեան... Գուցէ երբէք — նազովրեցու օրերից ի վեր—հակոտնեաները չեն միացել այդքան սրտառուչ շնաշխարհիկ ներդաշնակութեան մէջ, արտադրելով այնքան հակամարտ տպաւորութիւններ, յարուցանելով այնքան տարբեր գնահատութեան ձև ու չափեր։

Եւ այդ հակամարտ տպաւորութիւնները մոլեգնօրէն բաղխւում էին երէկ՝ մեծ մարդու, մեծ գրողի ու առաքելի գերեզմանի շուրջը։ Նրանք բաղխւում էին նոյնիսկ Երիտասարդ Ռուսաստանի, յեղափոխական Ռուսաստանի լայնածաւալ բանակի մէջ...

Մի կողմից այն պարզ, ցաւոտ ու տանջող գիտակցու-

թիւնը կար, որ այդ մարդը իր վիթխարի հեղինակութեամբ և իր արտառոց „համակերպութեան“ քայլոզներով ահագին վնաս է հասցրել յեղափոխական շարժումներին, ձևել ու կերպարանաւորել է մի ամբողջ մտայնութիւն ու հոգեբանութիւն, շեղել է ինտելիգենցիայի, երիտասարդութեան մի հատուածի ուշադրութիւնը միակ փրկարար, յեղափոխական ճանապարհից. . . Միւս կողմից՝ կար և այն ոչ նուազ պայծառ գիտակցութիւնը, որ յանձին Լեվ Տօլստոյի գերեզման էր իջնում պաշտօնական Ռուսաստանի, ցարիզմի ամենամեծ, ամենաահարկու ախոյեանը, որ նա մի տեսակ անձնաւորումն էր ազատագրական շարժման, մարմնացումը այն բոլոր իդեաների ու տենչանքների, դժգոհութեան և սրբազան ատելութեան, որոնցով տոգորուած է վաղուց ի վեր երիտասարդ, յեղափոխական Ռուսաստանը։

Ո՞րն է արդեօք գերակշռում երկու ուժերից, երկու հակընդդէմ ապաւորութիւններից... պարզ հաշիւ տալ՝ անհնարին է։

Նա ինքը ծնունդ էր իր հարազատ միջավայրի։ Նա մարմնացնում էր իր ցեղի դարևոր, աւանդական տրամադրութիւնները, նրա ֆատալ, ճակատագրական ազդեցութիւնը։ Նա ինքը բարձր թառած Եասնայա Պօլեանայի իր splendid isolation-ի մէջ, ցոլացրեց, անդրադարձրեց իր մտաւոր ու բարոյական բարձունքից՝ այդ ցեղային հանճարը, տարաւ նրա ինքնատիպ հմայքը դէպի ընդարձակ հորիզոններ, պատեցրեց այն աշխարհի բոլոր ծայրերում և... յաւակնութիւն ունեցաւ մտածելու, հասկացնելու, թէ այդ ինքնատիպ ռուսական հանճարը միակ բանալին է տիեզերական երջանկութեան առեղծուածի, մարդկային համատարած ազատութեան. նա արհամարհանքով երես դարձրեց արևմտեան քաղաքակրթութիւնից, դրժեց նրա մեթոդներն ու արգասիքները, և անդուլ հնչեցրեց իր տարամերժ քրիստոնէութեան շեփորը, խուլ, անտարբեր մարդկութեան ականջներին, ներբողեց իր ասկետական, ճգնաւորական իդեալները — հանդէպ արեան ու խրախճանքի մէջ լողացող բուրժուական ու բռնապետական աշխարհի — ջատագովեց պայքարի այնպիսի ձևեր, որոնք վաղուց դատապարտուած էին պատմական իրականութիւնից, հասարակական գիտութիւնից, ամենատարրական ողջմտութիւնից... Նա ապստամբեց նաև այդ հասարակական գիտութեան դէմ, արհամարհոտ արգահատանքով յետ մղեց Կօնտերին ու Սպենսերներին, որոնք հև ի հև չէին վաղել ուտօպիաների, ցնորքների ետևից, այլ ձգտել էին գտնելու պատմական էւոլիւցիայի կապը, նրա ճակատագրական օրէնքները և համաձայն այդ օրէնքների ձգտել էին կռահելու քաղաքակրթութեան գալոց ուղղութիւնը, ձևակերպելու դրա հետ և մարդկային բարոյականութեան սկզբունքները...

Նա որոտաց ամբողջ ժամանակակից քաղաքակրթութեան դէմ. դատապարտեց պատմութեան ընթացքը, և սիմպլիստ ու լաւատես անուրջներով տարուած՝ շպրտեց Արևմուտքի և ամբողջ աշխարհի երեսին իր „փրկարար“ նշանաբանները։ Եւրոպական քաղաքակրթութիւնը կեղծ, սխալ ու կորստաբեր ընթացք է բռնել — և Ռուսաստանի ստեպներից է, որ գալիս էր „ազատարար“ ղօղանջը... Նոյն ձևով էին տրամաբանում 60-ական թուականների ռուս հռչակաւոր նարոդնիկ-կոմմունիստները, որոնք ցասումով երես էին դարձնում արևմտեան կապիտալիստական քաղաքակրթութիւնից և ջատագովում իրենց գիւղական „համայնքը“, իրենց „միրը“, որ նրանց կարծիքով պիտի դառնար շուտով կոմմունիստական, սոցիալիստական հասարակակարգի խարիսխ, պատուանդան, պիտի ցատկէր մէկէն ի մէկ սոցիալիզմի, հաւասարութեան ու երջանկութեան դրախտը, առանց վերապրելու կապիտալիստական զարգացման ցաւոտ ու աւերիչ շրջանները։ Ստեպը այն ժամանակ ևս գալիս էր — ինքնավստահ, ինքնապաստան — խրատելու և ուսուցանելու արևմտեան Եւրոպային...

Եւրոպական քաղաքակրթութիւնը կեղծ էր, սխալ, կորստաբեր — և ահա Եասնայա Պօլեանայից ազդարարում էր տիեզերական միակ, փրկարար „համադարմանը“.

— Պէ՞տք է սիրել մերձաւորին, անգամ թշնամուն, բռնաւորին... Եւ չը պէ՞տք է դիմադրել չարութեանը — չարութեամբ...

Պէ՞տք է... Չը պէ՞տք է...

Այդ „հրամայականի“ մէջ է բոլոր ուտօպիաների, հասարակագիտական բոլոր ցնորքների ոգին, էութիւնը։ Եւ հէնց այդ կատէգորիկ հրամայականն է, որ դարձնում է նրանց գործնականապէս անարժէք, անկայուն, անիրագործելի։ Կեանքը, պատմութիւնը ունին իրենց երկաթէ օրէնքները, որ չի լինի մէկէն ի մէկ շուռ տալ, խորտակել յիսուսեան ու տօլստոյեան հրամայականներով։ Կեանքի, պատմութեան առաջադիմութիւնը չի հնազանդւում այդ տեսակ միամիտ հրամայականներին, կամ աւելի ճիշտ՝ նա հնազանդւում է այնպիսիներին, որոնք բղխում են կենդանի իրականութիւնից, որոնք համաձայն են այդ իրականութեան պահանջներին։ Կեանքի, պատմութեան ընթացքը մի հսկայական, բարդ ու կնճռոտ պրոցէս է, որ պահանջում է ռէֆօրմատորներից, վերանորոգիչներից՝ թափանցել իր այդ հոյակապ մեխանիզմը, ըմբռնել նրա օրէնքները և նրանց վրայ միայն կառուցանել հասարակական վերաշինութեան ծրագիրներ։

Իսկ այդ մեխանիզմը հրամայականօրէն թելադրում էր ռէֆօրմատորներին.

— Ատի՛ր բոլոր բռնաւորներին, դահիճներին... Եւ կազմակերպի՛ր նրանց նիւթած չարիքների դէմ՝ սիստեմատիկ և անողորմ կռիւ... եթէ կուզես ազատագրել թշուառ ու տառապող մարդկութիւնը։

Ահա ռէալիզմը... Ահա այդ է, որ ուտօպիա չէ, անիրագործելի երազանք չէ։ Եւ այդտեղ է փրկութիւնը։ Այդտեղ է բանալին տիեզերական ճշմարիտ ու վերջնական ազատութեան, երջանկութեան։ Այդտեղ է միակ զէնքը, որ պէտք է ի վերջոյ խորտակէ բռնակալական բոլոր պատնէշները, ստրկական բոլոր շղթաները և պիտի առաջնորդէ բազմաչարչար մարդկութիւնը դէպի ճշմարիտ Սիրոյ ու Եղբայրութեան թագաւորութիւնը...

Տօլստոյ այդպէս չ՛արեց։ Նա միայն հեծկլտաց ու որոտաց։ Նա միայն աղերսեց, յորդորեց... Նա միայն արձակեց դէպի աշխարհի չորս ծայրերը իր պերճախօս պատգամները։ Զա՜յն բառաբոյ յանապատի...

Աշխարհը լուրջ չընդունեց մեծ ծերունու օրհասա-

կան հաւա՛ք...՝ Նրա միամիտ աշխարհայեացքը, նրա միամիտ ու անկայուն պատմափիլիսոփայութիւնը։ Աշխարհը միայն հիանում էր նոր նազովրեցու անձնաւորութեամբ, որ բարոյական իր տարաժերժ քարոզներին գիտէր հաղորդել գեղարուեստական իր հզօր հանճարի թովքը, իր գերազանց արուեստը։ Աշխարհը հիանում էր, գիտակցելով հանդերձ, որ նոր առաքեալին շատ էլ—աւա՜ղ—չէր աջողւում լինել կուռ, անսասան իր բարոյական դօգմի մէջ, լինել հաւատարիմ իր կատեգորիկ հրամայականներին—իր սեփական կեանքի մէջ...

Տօլստոյ, իբրև մ օ ր ա լ ի ս տ ու ա ր ե ս տ ա գ է տ, դարձաւ աշխարհի պալծանքներից մինը։

Տօլստոյ, իբրև ս օ ց ի օ լ օ գ ու փ ի լ ի ս օ փ ա յ—մնաց միջակ մտածողների շարքում, առանց որևէ սիստեմի և համադրական, ստեղծագործող ոգու, առանց նոյնիսկ օրիգինալ, ինքնատիպ յղացումների։

Տօլստոյ, իբրև յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն... դա ինքը Առեղծուածն է...

***

Քրիստոնէութիւնը, զուտած, մաքրուած իր աւելորդ բեռ տարրերից, իր գռեհիկ նախապաշարումներից ու անհեթեթ սնապաշտութիւններից, „Ցարութեան“, „Անմահութեան“, „Համբարձման“ ու „Յայտնութեան“ վերանցական ու գերբնական դօգմերից ու „հրաշքներից“, քրիստոնէութիւնը—անդօգմ, անտաճար ու անքահանայ, իր նախնական հարազատութեամբ, իր հիմնադրի պարզ, անաղարտ, անապական դրոշմով, քրիստոնէութիւնը իր տիեզերական Սիրոյ քարոզով — ահաւասիկ Լեւ Տօլստոյի հաւատամքը, նրա բոլոր պատճառաբանութիւնների չուկէտը, նրա բոլոր սօցիալական ծրագիրների կուանը, խարխխը։

Եւ նոյն քրիստոնէական մօրալի վրայ հիմնուած է տօլստոյական ա ն ա ր խ ի զ մ ը։ Նոյն այդ մօրալի տեսակէտից, յանուն իսկական, ջինջ, անխարդախ քրիստոնէութեան, նա անվերապահ դատապարտում է ժամանակակից պետութիւնը, հանդերձ իր բոլոր օրէնքներով ու օրգաններով, ի դէմս իր բոլոր ձևերի և այլազան ներկայացուցիչների, դատապարտում է և գոյութիւն ունեցող պ ա շ տ օ ն ա կ ա ն ե կ ե ղ ե ց ի ն, դարձեալ բոլոր ձևերի տակ... որովհետև նրանք բոլորը, պետութիւն, եկեղեցի, օրէնք, դատարան և այլն շեղուել են դարերից ի վեր քրիստոնէական ճշմարիտ հաւատամքից, կեղծել են, խեղաթիւրել նրա ոգին, դաւաճանել են նրա ամենավեհ, ամենամարդկային, տիեզերական սկզբունքներին, նեռուել են հեթանոսական բարքերի մէջ...

Քրիստոնէական ճշմարիտ վարդապետութեան էութիւնը և գերագոյն օրէնքը — Ս Է Ր Ն է։ Նա է, որ շաղկապում է մարդ-էակներին, որ լուծում է կեանքի բոլոր հակասութիւնները։ Սիրի՛ր քո մերձաւորին, գիտցի՛ր զոհել ինքզինքդ յանուն ու յօգուտ ուրիշների, գիտցի՛ր աշխատել, մաքառել յանուն ընդհանուր տիեզերական բարօրութեան ու երջանկութեան։ Այդ կերպ միայն կը բարձրանաս աստիճանաբար անասնական վիճակից և կը մտնենաս Մարդ-Աստուծոյ կատարեալ, իդէալական վիճակին։

Իսկ այդ Սէրը ատող է ամեն տեսակ բռնութեան, այդ Սէրը մերժող է բոլոր այն հեղինակութիւնների—պետութիւն, օրէնք, կառավարութիւն, եկեղեցի և այլն—որոնք գալիս են բռնանալու մարդկային կամքի վրայ, կաշկանդելու նրա ազատ շարժումները։

Սիրոյ գերագոյն պօստուլատն արգելում է ուժ, բռնութիւն գործ դնել որևէ անհատի վրայ, իսկ պետութիւնն ու եկեղեցին շարունակաբար, սիստեմաբար գործադրում են այդ ուժն ու բռնութիւնը, մէկը պահանջելով բացարձակ հպատակութիւն իր օրէնքների ու ոստիկանութեան միջոցով, միւսը պահանջելով կոյր, անպայման հաւատ ու հնազանդութիւն՝ դժոխքի ու բանադրանքի սպառնալիքով։

Ցանցաւոր է ամբողջ ժամանակակից մեխանիզմը, յանցաւոր է իրաւունքի ու „արդարադատութեան“ ամբողջ սիստեմը, որ ձգտում է ուղղել մարդկանց բռնութեամբ, ուժով, պատիժներով։ Քրիստոս ասել է. „չարիքին չը պէտք է դիմադրել չարութեամբ“... Միակ ազդու և արդասաւոր դիմադրութիւնը մարդկանց չար, վնասակար բնազդներին ու գործերին — բ ա ր ո ւ թ ի ւ ն ն է։ Ձեր ամենաբիրտ, ամենադաժան թշնամիներին անգամ՝ պատասխանեցէ՛ք սիրով ու բարութեամբ։

Պետութիւնը իր բոլոր ձևերով — միապետութիւն, հանրապետութիւն և այլն — մի վնասակար և աւելորդ ֆէտիշ է *), Տօլստոյի կարծիքով, — չար, քահանայ և շահամոլ անհատների մի համախմբում, որ բռնութիւն է գործ դնում ուրիշների վրայ, ղեկավարւում է միշտ սեփական շահերով, և երբէք՝ ընդհանուր բարօրութեան գաղափարով։ Եւ ճշմարիտ քրիստոնէութիւնը վաղուց ի վեր ջնջել է այդ ֆէտիշը, ջնջել է բոլոր կառավարութիւնները, որոնք դէմ են գնում մարդկանց հ ա ւ ա ս ա ր ո ւ թ ե ա ն գաղափարին, դէմ են գնում և Քրիստոսի գերագոյն հրահանգին. „չարին չարով մի դիմադրիր“։

Քրիստոնէութեան ժամանակակից առաքեալը կատաղի ոճով խարանում է այն բոլոր հաստատութիւնները, որոնց վրայ հիմնուած է պետութիւնը. նա խարանում է զ օ ր ք ը, որ սոսկ „ճնշման ու սպանութեան մի գործիք է“, խարանում է ո ս տ ի կ ա ն ո ւ թ ի ւ ն ը, որ մի ուրիշ դպրոց է ոճրագործութեան, նշանակում է պ ա տ ե ր ա զ մ ն ե ր ը, որ գրեթէ միշտ ծնունդ են կառավարութիւնների, իշխողների յանցաւոր մրցակցութեան, նշանակում է կեղծ, ուռուցիկ հ ա յ ր ե ն ա ս ի ր ո ւ թ ի ւ ն ը, որի անունով կատարել են ամենուրեք և շարունակ կատարւում են ամենաքստմնելի, հակամարդկային ոճիրներ...

Պետութեան հետ պէտք է ջնջի և Սեփականութիւնը, աւելի ճիշտ, նրա ներկայ, իրական հաստատութիւնը։ Նա ևս կոպտօրէն հակասում է Սիրոյ պատուիրանին։ Նա պառակտում է մարդկութիւնը, բաժանում է այն՝ հակամարտ դասակարգերի, կաստերի։ Նա ստեղծում է մի կացութիւն, ուր մարդկանց փոքրամասնութիւնը իշխում է մեծամասնութեան վրայ։ Սեփականութիւնից զրկուածները ստորադրւում, հպատակւում են սեփականատէր հարուստներին։ Մի դասակարգ շարունակ աշխատում, քրտինք է թափում, և սակայն

*) *Fétiche*—կուռք։

միշտ էլ տառապում է ու մեռնում սովից. մի ուրիշը չի աշխատում և սակայն ճնշում է, վայելում, շռայլում։

Առաքեալի արդարատենչ հոգին ցասումով գրոհ է տալիս դասակարգերի անհաւասարութեան դէմ։ Ոճիր է, ասում է նա, որ հազարաւոր մարդիկ քաղցած թափառեն փողոցներում, մինչդեռ ուրիշ մարդիկ ապրեն պերճանքի ու առատութեան մէջ։ Բոլոր մարդիկ կոչուած են հաւասար իրաւունքով օգտուելու մայր-երկրի (մայր-հողի) արտադրած բարիքներից. իւրաքանչիւր մարդ պէտք է վայելէ իր աշխատանքի պտուղները։

Ժամանակակից իրաւակարգը պէտք է կործանուի...

Ցետո՞յ...

Ցետոյ Սէրը, ճշմարիտ քրիստոնէական Սէրը պէտք է թագաւորէ մարդկանց միջև։ Տօլստոյ չի տալիս որևէ նախագիծ ապագայ հասարակակենցաղի, չի տալիս նոյն իսկ ընդհանուր սկզբունքներ, սխեմ։ Եւ այդ խնդիրը չի էլ հետաքրքրում նրան։ Բաւական է, որ վերանայ պետական մեխանիզմը իր օրէնքներով ու պատիժներով, իր բանտերով, կախաղաններով, գիլոտիններով, — աշխարհը հիմնականապէս կը կերպարանափոխուի, ոճիրն ու ոճրագործները կ'անհետանան, մարդկութիւնը կը վերածնուի ու կ'երջանկանայ... սիրոյ վսեմ հաւատամքի մէջ...

Ցեղափոխութեան միջոցնե՞ը... Գոդուինի և Պրուդոնի պէս, Տօլստոյ ևս յայտարարում է, որ այն մարդիկ, որոնք ըմբռնել են ճշմարտութիւնը, պէտք է ձգտին համոզել ըստ կարելւոյն մեծ թիւով ուրիշ մարդիկ, յանուն սիրոյ հաւատամքի։ Եւ երբ մարդկանց ահագին մեծամասնութիւնը կը գիտակցէ յեղաշրջման անհրաժեշտութիւնը, այն ժամանակ ինքնին կը գան „նոր կարգերը"։

Բայց երբէք չը պիտի դիմել բռնութեան։ Մերժւում են բռնի միջոցները ոչ միայն հանդէպ ճնշուածների ու հարստահարուածների, այլև — փոխադարձաբար — հանդէպ ճնշողների ու հարստահարիչների։ Սիրոյ աւետարանը արգելում է բռնութիւնը նոյնիսկ ընդդէմ ամենադաժան բռնաւորների, դահիճների, մարդասպանների *)։ Տօլստոիզմը թոյլատրում ու խրախուսում է միմիայն „կրաւորական դիմադրութիւնը", այսինքն, հրաժարումը զինուորական ծառայութիւնից, հարկատուութիւնից և այլն—մի տակտիկ, որ յանգում է ճակատագրօրէն անզօր, քրիստոնէական համակերպութեան... Տօլստոյ ինքզինքը թշնամի է յայտարարում յեղափոխութեան այն բոլոր ձևերի, որ կիրառուել են դարերից ի վեր ամբողջ աշխարհում և դրանով իսկ նա դնում է ինքզինքը կեանքից դուրս, իրականութիւնից դուրս, մետաֆիզիքայի ու բանդագուշանքի ամպերում... „Տակտիկային" իր համոզումներով տօլստոյական անարխիզմը հիմնականապէս տարբերւում է անիշխանական այն դաւանանքից, որի կրող են հանդիսանում Բակունին, Կրապոտկին, Ժան Գրաւ, Սեբաստիան Ֆոր, Լուիզ Միշէլ, Ռէկլիւ, Կաֆիէրո, Մալատեստա, Լանդաուէր, Նիւվենհաուս և բոլոր միւս, հին ու նոր, մեռած ու ողջ, անիշխանական քարոզիչները։

***

Ասացինք — իր միջավայրի ծնունդն է։ Եւ այդ „ծնունդը" հարազատօրէն թարգմանեց, արտայայտեց այն մեծ, անլեզու զանգուածի, հարիւր միլիօնաւոր ռուս գիւղացիութեան տրամադրութիւնները, նրա խորարմատ բնազդները, նրա բովանդակ մտայնութիւնն ու հոգեբանութիւնը... Տօլստոյ թարգմանեց — իր կրօնական, սոցիալ-փիլիսոփայական թէօրիաներով — այդ զանգուածի ոչ միայն դարևոր, ծովածաւալ վշտերը բռնակալութեան խարազանի տակ, այլ և նրա խորունկ, ֆատալիստ, ճակատագրապաշտ... կրաւորականութիւնը, քրիստոնէական այն սրտաշարժ համակերպութիւնն ու խոնարհութիւնը, որով այդ անօրինակ կոլոսը քարշ է տալիս յաւիտենօրէն իր անասնական ստրկութեան լուծը...

Աւելին կայ։ Տօլստոյի ոգին ապրում է անգամ Ռուսաստանի այն յեղափոխական կուսակցութիւնների մէջ, որոնք վերջին 15 տարուայ ընթացքում կատաղաբար պայքարել են տօլստոյական վարդապետութեան դէմ, սակայն իրենց բովանդակ գործելակերպի նշանաբան են դարձրել առաքեալի քարոզած խրախուսած

— Կրաւորականութիւնը։

Տօլստոյիզմը ապրում ու բարգաւաճում է ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մէջ։ „Տիրապետող յեղափոխական կուսակցութիւնը", միանգամայն ներշնչուած ցեղի դարաւոր հանճարով, վաղուց ի վեր հրաժարիմք է ասել կուի այն մեթոդներին, որոնք անկապտելի սեփականութիւն են եղել բոլոր երկրների ապստամբ, յեղափոխական կուսակցութիւնների և որոնց շնորհիւ նրանք... յաղթել են։ „Տիրապետող յեղափոխական կուսակցութիւնը", թէպէտ և մոլեգնօրէն դրժում է սլավոնական մեծ Միստիկի համակերպութեան ու կրաւորականութեան դաւանանքը, այնուամենայնիւ ինքը անգիտակցաբար կրում է իր մէջ այդ դաւանանքի ոգին։

Եւ երբ անդրադառնում էք ռուսական իրականութեան վրայ, երբ զուգադրում էք այդ երկրի ամենամեծ հանճարը և ամենամեծ յեղափոխական կուսակցութիւնը՝ չէք կարող չը յիշել մի ուրիշ տօլստոյապաշտ ռուս միստիկի, Դաւիդ Մերեժկովսկու, նշանակալի խօսքերը, արտասանուած երկու տարի սրանից առաջ — խօսքեր գերագոյն յուսահատութեան և լքման, խօսքեր, որոնց մէջ այդ սքանչելի աստուածաբան-ստիլիստը բացայայտ կերպով հասկացնում էր, որ իր խորունկ համոզումով ռուս ժողովուրդը բնազդօրէն, իր ինքնատիպ ու դարաւոր հանճարի զօրութեամբ, գարշում է բուն յեղափոխական մեթոդներից և երբէք չը պիտի կարողանայ արտադրել ապստամբական թռիչքներ... *à l'occidentale*,

Գէթ արտադրէր — *à l'orientale*...

---

*) Այդպէս էր պատասխանում „Եւանայա Պոլեանա"-ի առաքեալը նաև հայկական մի պատգամաւորութեան, որ թիւրքահայոց մեծ զուլումների միջոցին ներկայացել էր նրան, միջամտութիւն խնդրելու ի նպաստ հայերի։ «Քրդական և սուլթանական գազանութիւնների առջև, հայերը պէտք է համակերպին և չը դիմեն յեղափոխական միջոցների... Զարին չարով չը պէտք է դիմադրեն»... Նոյն քարոզն էր ուղղում Տօլստոյ՝ և իր հայրենակից ռուս յեղափոխականներին։

Աւելորդ է շեշտել տօլստոյական կամ քրիստոնէական այդ տակտիկի բացարձակ անկայունութիւնը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՐ ԹԻՒՐՔԻԱՆ

V

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ

—

Ժամանակակից քաղաքական-օրէնսդրական մտահոգութիւններու մէջ խոշոր տեղ կը գրաւէ համեմատական ներկայացուցչութեան խնդիրը։ Ֆրանսան երկար ատենէ ի վեր ալէկոծուած է այդ հարցով։ Զուիցերիան վերջերս անոր քննութիւնը յանձնեց համաժողովրդական ընդհանուր քուէարկութեան։ Միւս երկիրներու մէջ, այս կամ այն առիթով, շարունակ կ'արծարծուի և կը տաքանայ այդ վիրաւոր խնդիրը։

Ռամկավարութեան աղաղակն է, որ խորհրդարաններու սեղանին վրայ է դրեր համեմատական ներկայացուցչութեան սկզբունքը։ Առանց այդ գաղափարի իրականացման և գործադրութեան՝ ժողովրդական գերիշխանութեան սկզբունքը—բոլոր սահմանադրութիւններու մեկնման կէտը—անկատար և աղաւաղ ձևով հանդէս կուգայ։

Տեսանք, թէ ինչպէս քաղաքական բնաշրջումը հետզհետէ ծաւալուելով ու խորանալով՝ աշխատեց ի մի հաւաքել բոլոր այն գաղափարները, որոնց ներկայութիւնը անհրաժեշտ է իրական դարձնելու համար ժողովուրդներու կամքը։ Սկիզբը վարանոտ ու տարտամ, օրէնսդրական-սահմանադրական հիմնարկութիւնները՝ լուսաւորուելով մասամբ ամենօրեայ փորձերէն, մասամբ պատմութենէն և մասամբ քաղաքական-ընկերաբանական գիտութիւններէն՝ սկսան կամաց-կամաց ընդարձակել ընտրողական իրաւունքը։ Հին, մեռնող դասակարգերու ճիչերն ու դաւադիր ջանքերը անզօր էին քաղաքակրթութեան և ռամկավարութեան յաղթական գնացքին առջև։ Ընդհանուր ձայնատուութիւն, ուղղակի ձայնատուութիւն, գաղտնի ձայնատուութիւն — այսօր կը կիրարկրեն մէկէ աւելի պետութիւններու մէջ։ Կանանց քաղաքական իրաւունքի խնդիրը, որուն վրայ անցեալ յօդուածիս մէջ քիչ մը խօսեցայ, սկսած է արդէն յեղափոխել մտքերը։ Ատոր կը միանայ համեմատական ներկայացուցչութեան գաղափարը։ Երկուքը միասին կը կազմեն ռամկավարութեան անբաժանելի մասերը և ներկայ քաղաքական իմաստութեան հրահանգը։

Թիւրքիոյ համար համեմատական ներկայացուցչութեան խնդիրը ահագին կենսական կարևորութիւն ունի։ Անոր ապագան, երջանիկ ու ծաղկեալ վիճակը չափազանց սերտ կերպով կախուած է բազմաթիւ և բազմազան տարրերու ներդաշնակ ու արդար հաւասարակշռութենէն։ Մէկ տարրի, մէկ կուսակցութեան, մէկ ազգութեան գերակշռութիւնը, մանաւանդ Թիւրքիոյ համար կրնայ ճակատագրական և անբուժելի հետևանքներ ունենալ։ Հաւասարակշռութեան խախտումը և մէկու մը տարամերժ տիրապետութիւնը—ահաւասիկ նոր Թիւրքիոյ մեծագոյն թշնամիներէն մին։

Սակայն նախ քան Թիւրքիոյ իրականութեան քննութիւնը՝ անհրաժեշտ կը համարինք գէթ համառօտակի ներկայացնել, թէ ի՞նչպէս է հանդէս եկեր քաղաքական այդ ծանրակշիռ հարցը եւրոպական պետութիւններու մէջ և թէ ի՞նչ է ընդհանրապէս համեմատական ներկայացուցչութիւնը։

Այս սկզբունքը ամենէն առաջ հրահանգուած է քաղաքական. ընկերաբանական ուսումնասիրութիւններուն մէջ։

Օ տ ի ւ ա ր տ Մ ի լ լ, 1867 թուականին, երբ Անգլիոյ մէջ հարց բարձրացաւ ընտրողական օրէնքը ընդարձակել՝ առաջարկելով համեմատական ներկայացուցչութիւնը՝ կ'ըսէր. „բաւական չէ քուէարկութեան իրաւունք տալ ոչ-ընտրողին, հարկաւոր է մանաւանդ այդ իրաւունքը ապահովել ընտրողին"։

Ադկէ երկու տասնեակ տարի առաջ, Ֆրանսացի տաղանդաւոր հեղինակ կ ո ն ս ի դ է ր ա ն (*Considérant*), 1846 թուականին խորհուրդ կուտար Ժընէվի քաղաքացիներուն գործադրել համեմատական ներկայացուցչութիւնը։

Է ր ն է ս տ Ն ա վ ի լ լ, Ժընէվի մեծանուն ուսուցչապետն ու իմաստասէրը, իլած քաղաքական պայքարներու փոթորկոտ ասպարէզը՝ հետևեալ կերպով կը ձևակերպէր իր և իրայիններու պահանջը. „ա մ ե ն ո ւ ն ներկայացուցչութիւն, մեծամասնութեան կառավարութիւն. ահաւասիկ մեր ծրագիրը։ Մեծամասնութեան տարամերժ ներկայացուցչութիւն, փոքրամասնութեան կառավարութիւն—ահա թէ ի՞նչ կ'իրագործուի իրերու այժմեան կացութեան մէջ"։

Ամենօրեայ փորձերը միւս կողմէն եկան իրաւունք տալու հեղինակներու տեսութիւններուն և աւելի ու աւելի ամրապնդելու համեմատական ներկայացուցչութեան գաղափարը։

Մեծամասնական սիստեմը, որ այսօր կը գործադրուի գրեթէ բոլոր պետութիւններու պարլամենտական ընտրութեանց մէջ՝ կը ծնէ ակնյայտնի ու աղաղակող անարդարութիւններ, հակասութիւններ, աղաւաղումներ։ Ժողովրդական գերիշխանութեան նախագաղափարը, ազգային կամքի սկզբունքը, ընդհանուր ձայնատուութեան օրէնքը անխորհուրդ տառ կը հանդիսանան և գերազանցապէս կ'անջատուին այդ սիստեմի շնորհիւ։ Քաղաքացիները անունով միայն հաւասար իրաւունք կունենան, թղթի վրայ միայն օրէնսդրական հիմնարկութեան մէջ կը ներկայանան։ Իրօք, գործնականին մէջ ասոնց ստուար մասը անիրաւուած ու զրկուած՝ չի կրնար իր խօսքը, իր ձայնը, իր խորհուրդը հաղորդել օրէնսդրական բարձրագոյն մարմնին։

Դիցուք թէ ունէ երկրի մէջ գոյութիւն ունին 100 ընտրողական շրջաններ կամ նահանգներ, իւրաքանչիւր շրջանի մէջ կայ 100,000 ընտրող ազգաբնակութիւն։ Դիցուք թէ իւրաքանչիւր շրջանէն ազգային խորհրդարան պիտի երթան չորս քաղաքացի։ Ընտրութիւնները տեղի կունենան մեծամասնական սիստեմին համաձայն։ Այդ սկզբունքին հիման վրայ բաւական է, որ 100,000 ընտրող բնակիչներէն 51,000-ը միաբան ըլլան։ Անոնք կրնան պարլամենտ ուղարկել իրենց ցանկացած պատգամաւորներուն։ Ենթադրենք թէ ընտրութիւնները նոյն ձևով տեղի կունենան բոլոր շրջաններուն մէջ ալ։ Այսպիսով 10 միլիոն ընտրող ազգաբնակութենէն պարլամենտ գացած պատգամաւորները կ'ըլլան միայն 5 միլիոն 100,000 ընտրողներուն ներկայացուցիչները։ Մնացած 4 միլիոն 900,000 ընտրողական ձայները մնացին առանց

ամենաչնչին հետևանքի, կորան անհուն դատարկութեան մէջ։ Ընհանուր ձայնատուութեան ռէժիմին ներքև — ընտրողական մեծամասնական սիստէմին պատճառով — այսպիսի այլանդակութիւններ ամեն անգամ կրնան հանդէս գալ։

Դեռ աւելի սարսափելին կարելի է երևակայել։ Ենթադրենք թէ՝ ընտրողական շրջաններու մէջ պայքարող կուսակցութիւնները երկուսէն աւելի են։ Դիցուք թէ այս կամ այն շրջանին մէջ երեք կուսակցութիւն կը գործեն և կը ճակատին միմեանց դէմ, և երեքն ալ կուզեն անկախ ու առանձին ըլլալ։ Մէկ կուսակցութիւն իր հետ ունի 36,000 ընտրողներու ձայն, երկրորդը ունի 33,000 ձայն, իսկ երրորդը 31,000։ Շատ դիւրաւ կրնայ պատահիլ, որ 36,000-ը խորհրդարան ուղարկեն չորս պատգամաւորներ. մինչդեռ միւս կուսակցութիւնները, որոնք ունին 33,000 և 31,000 ձայներ՝ զուրկ մնան պատգամաւորէ։ Մեծամասնական սիստեմին պատճառով 36,000 փոքրամասնութիւնը ունեցաւ չորս ներկայացուցիչ, իսկ 64,000 մեծամասնութիւնը, որովհետև կը գործէր երկու մասի բաժանուած, չունեցաւ և ոչ մէկ ներկայացուցիչ։

Մեր առաջ բերած թիւերը մտացածին են, ի հարկէ։ Սակայն իրականութեան մէջ ամեն քայլափոխի կը պատահին և կրնան շարունակ պատահիլ նման այլանդակութիւններ ու տարկանոնութիւններ։ Պարլամենտական երկիրներու մէջ, մեծամասնական սիստեմին առաջացուցած խայտառակութիւնները մէկէ աւելի անգամ արձանագրուած են և յայտնի են ամենուն։ Համեմատական ներկայացուցչութեան պահանջը և քաղաքական այդ նշանակալից հոսանքը սկիզբ կառնեն գոյութիւն ունեցող այլանդակութենէն ու ծայրայեղ անարդարութենէն։ Այս նոր սիստեմը կաշխատէ այնպէս կանոնաւորել ընտրողական գործը, որ այլ ևս չը կրկնուին նման անբնական, վատառողջ երևոյթներ քաղաքական-հասարակական կեանքի մէջ։

Կուսակցութիւնները ընտրողներուն թիւին համեմատ պատգամաւորներ պիտի ուղարկեն պարլամենտ։ Բնականաբար համեմատական ներկայացուցչութիւնը չը պիտի կարողանայ կատարեալ դարձնել արդարութիւնը. ան չը պիտի կարողանայ նաև բացարձակապէս հաւասարակշռել կուսակցութիւններու յարաբերութիւնները։ Այդպիսի անկատարութիւններն ու անբացարձակութիւնները, սակայն, մարդկային բնութեան ու մարդկային ստեղծագործութեան արդիւնք են։ Այս աշխարհիս վրայ ո՛չ կատարեալ արդարութիւն կայ և ոչ բացարձակ հաւասարակշիռ։ Ամեն ինչ յարաբերական է։ Ամբողջ խնդիրը նրա մէջ է, որ վախճան տրուի ներկայիս աղաղակող անարդարութեան ու բիրտ, գռեհիկ այլանդակութեանց։

Համեմատական ներկայացուցչութիւնը հնարաւորութիւն կուտայ ամեն կուսակցութեան և ամեն քաղաքական խմբակցութեան հանդէս գալ երկրին բարձրագոյն հիմարկութեան մէջ։ Անշուշտ այդ հնարաւորութիւնը — ինչպէս ըսինք — անթերի չէ, բայց ադով հանդերձ անհամեմատ աւելի բարձր է և աւելի կատարեալ, քան կրնայ երաշխաւորել մեծամասնական սիստեմը։

100,000 ընտրողներու ձայն ունեցող վերոյիշեալ շրջանէն պարլամենտ գացող չորս պատգամաւորները — համեմատական ներկայացուցչութեան համաձայն — ո՛չ թէ ամենքը մէկէն միայն մէկ կուսակցութեան ներկայացուցիչները կ'ըլլան, այլ երկու, երեք, չորս կուսակցութեան։

Դժուար է անկասկած, մինչև իսկ անհնարին, որ ամեն կուսակցութիւն ճշգրտօրէն իր ուժերու համաձայն ներկայանայ խորհրդարանին։ Կրնայ պատահել, որ այս ու այն կուսակցութեան քանի մը ձայները կը զոհաբերուին միւսին. կամ մէկ այլ կուսակցութեան քանի մը պակաս ձայները կը ներուին իրեն։ Կրնայ պատահիլ նաև, որ չափազանց մանր քաղաքական խմբակցութիւնները, չափազանց անշան հոսանքները հնարաւորութիւն չունենան արտայայտուիլ։ Մարդկութիւնը, կենդանի, ապրող մարդիկ թուաբանական միութիւններ չեն, որ ուզած չափով հնարաւոր ըլլայ կոտորակներու վերածել։ Պէտք է հաշուիլ մարդու անբաժանելիութեան հետ և ներել այն անկատարութիւնները, որոնք այդ հիմնական յատկութեան անխուսափելի հետևանքներն են։ Համեմատական ներկայացուցչութեան բոլոր առաւելութիւնները այդ սիստեմին անկասկածելի առաւելութիւններն են. անոր բոլոր թերութիւնները մարդկային բնութեան թերութիւններն են։

Համեմատական ներկայացուցչութեան թշնամիները կառարկեն թէ՝ այդ սիստեմին կիրառութեան հետևանքով խորհրդարանին մէջ կառավարող մեծամասնութիւնը կը խախտուի, կը կազմալուծուի և որ ուրեմն երկրին կառավարութիւնը կը վատթարանայ։ Նախ դժուար է պնդել, թէ անպատճառ մեծամասնութիւնը կը կորսնցնէ իր նախկին դիրքը։ Անիկա անշուշտ մեծ հարուած կը ստանայ և կը զրկուի իր արտօնեալ, ինքնակալ դրութենէն։ Իր հանդէպ անիկա կը տեսնէ ուրիշ կուսակցութեանց ներկայացուցիչներ, կը սանձահարէ իր միապետական յաւակնութիւնները, հաշուի կառնու երկրին ընդհանուր տրամադրութիւնը և ըստ այնմ կուղղէ իր կուսակցական քաղաքականութիւնը։

Եթէ ընդունենք անգամ, որ համեմատական ներկայացուցչութեան հետևանքով խորհրդարանին մեծամասնութիւնը բացարձակապէս պիտի բաժան-բաժան ըլլայ և որ ոչ մէկ կուսակցութիւն մեծամասնութիւն չպիտի կազմէ — ադկէ երկրին կառավարութիւնը բնաւ չի վատնգիր և հասարակական օգուտը չի զոհաբերուիր։

Ընդհակառակ. հաւասար կուսակցութիւնները, ակնատես ուժերու արդար բաժանման, այլևս առիթ չպիտի ունենան հետամտել կուսակցական շահերու և յաղթանակներու ու ամենքը մէկէն պիտի ձգտին երկրին ընդհանուր բարօրութեան ու բարգաւաճման։ Այդ վիճակի մէջ շատ աւելի դիւրին պիտի ըլլայ կուսակցական համախմբումներ կազմակերպել ուէ օգտաւէտ, հանրաշահ խնդրի մը շուրջը։ Մասնակի, տեղական, մանր շահերը տեղի պիտի տան ընդհանուր, համազգային շահերուն։ Զուիցերիոյ շատ մը կարևոր նահանգական խորհրդարաններու մէջ — օրինակի համար՝ Ժընէվ, Ցիւրիխ, Բազէլ, Սէն-Գալ՝ բացարձակ մեծամասնութիւն գոյութիւն չունի։ Կուսակցութիւնները, ընտրող ձայներու քանակին համա-

ձայն, բաժան-բաժան են եղած։ Ու չնայելով այդ հանգամանքին՝ վերոյիշեալ նահանգները (canton) կառավարական ոչ մէկ դժուարութեան առջև չեն կանգնած։ Անոնք կը կառավարուին շատ աւելի լաւ, քան միւս նահանգները, ուր խորհրդարանական մեծամասնութիւն գոյութիւն ունի։ Համեմատական ներկայացուցչութեան հետևանքով ազգային, համապետական միութիւնը ոչ թէ կը խանգարուի—ինչպէս անոր հակառակորդները կը տարաձայնեն—այլ աւելի կ'ամրապնդուի։

Մեծամասնական արդի սիստեմը իրական պատերազմի կը վերածէ երկիրը ընտրութիւններու ամբողջ տևողութեան միջոցին։ Միևնոյն պետութեան զաւակները կը կանգնին միմեանց դէմ, իբրև թշնամի բանակներ։ Սկզբունքներու, գաղափարներու ազնիւ պայքարը շատ յաճախ կը վերանայ՝ յանուն այս ու այն երկրորդական, անկարևոր մտահոգութեան։ Հասարակութեան տրամադրութիւնները կ'անբարոյականան, ձգտումները կը վատասերին, կրքերն ու վատ բնազդները գործունէութեան ասպարէզ կը գտնեն, որոգայթները շարժման մէջ կը մտնեն—և այս ամենը կը կոչուի ընտրողական պայքար։ Մեծամասնական սիստեմին պատճառով կը տուժեն կուսակցութիւնները։ Հասարակութեան մէջ սխալ գաղափար կ'ընդհանրանայ և աշխարհահայեացքներն ու ուղղութիւնները կը ներկայանան իբրև չարիքի պատճառներ։ Որոշ նկարագրի տէր անհատներ քաղաքական-հասարակական ասպարիզէն կը հեռանան, հանրային գործունէութեան դաշտը կը լքեն և կը կղզիանան այս ու այն կողմ։ Ու շատ յաճախ, ազնիւ քաղաքացիներու փոխարէն, պայքարի հրապարակ կ'իջնան արկածախնդիր բնաւորութիւններ։ Ցաղթողներ ու պարտուողներ, տապալողներ ու տապալուածներ, ներկայացուցիչներ ունեցողներ և ներկայացուցիչ չունեցողներ։ Ոմանք կը ցնծան ու ծափ կը զարնեն, ոմանք կը յուզուին ու կը զայրանան։ Համաձայնուեցէք, որ այսպիսի պայմաններու մէջ, քաղաքացիական այս ճշմարիտ կռիւ ատեն, ոչ մէկ ազգային, ոչ մէկ համապետական միութեան մասին խօսք չի կրնար ըլլալ։ Ոչինչ աւելի ծանր կերպով չի ընդդիմանար այդ միութեան փթթումին, որքան մեծամասնական սիստեմը։ Ընտրողական այս ձևը և ազգային միութիւն—իրարու հակասող, բացասական գաղափարներ են։

Ընդհակառակը. համեմատական ներկայացուցչութեան շնորհիւ ազգաբնակութեան տարբեր խաւերն ու տարբեր համախմբումները հնարաւորութիւն կունենան իրենց ձայնը լսելի ընելու։ Անիրաւողներ ու անիրաւածներ չկան այդ սիստեմի մէջ և ազգային միութիւնը այդ տեսակէտով խոչընդոտի չի հանդիպիր։ Այդ նոր սիստէմին համաձայն՝ ընտրութիւններն աւելի կանոնաւոր ձև ու աւելի առողջ պարունակութիւն կը ստանան։ Աննպատակ ու անիմաստ պայքարները կը վերանան։ Անձնաւորութիւններու խնդիրը այլ ևս կեդրոնական մտահոգութիւն չի ներկայացներ։ Մարդկանց փոխարէն՝ սկզբունքներ, գաղափարներ առաջ կուգան։ Հասարակութիւնը կը վարժուէ քաղաքական-պետական խնդիրներու վրայ նայել սկզբունքային տեսակէտներով։ Ուսումնասիրութեան, խորհրդակցութեան նիւթ կը դարձնէ խնդիրները և ոչ անձերը։ Կը մշակուի, կը զարգանայ լայն հասարակական գիտակցութիւն ու անկեղծ քաղաքական համոզմունք։ Համեմատական ներկայացուցչութեան ընձեռած առաւելութիւններու շնորհիւ կամաց-կամաց կը դաստիարակուի այն մութ զանգուածը, այն թաւար բանակը, որ, մինչև իսկ այսօր, շատ տխուր դեր կը կատարէ ընտրողական գործին մէջ։ Ցաք ու ցրիւ տեղատուած քաոսը կամաց-կամաց կըսկսի կազմակերպուիլ և կուսակցութիւնները պայծառ, յստակ, հետևողական կերպարանքով կը ներկայանան պետութեան բարձրագոյն հիմնարկութեան մէջ։

Համեմատական ներկայացուցչութեան սիստեմի մէջ կը տուժեն անոնք, ով կազմակերպուած չեն։ Խառնակութիւնը, անկարգութիւնը, անկանոնութիւնը չեն կրնար յարատևել այդ սիստեմի տիրապետութեան ներքև։ Եւ որպէս զի կեանք ունենան, որպէս զի քաղաքական-հասարակական կառուցուածքին վրայ որևէ ազդեցութիւն ձեռք բերեն՝ պէտք է կազմակերպուին։

Այսպիսով պետութեան մեքենան կը շարժեն ոչ թէ անգիտակից և քաոսական հոսանքները, այլ լուսաւոր ու համակարգուած ուժերը։

Համեմատական ներկայացուցչութիւնը քաղաքական բնաշրջումի մէջ մէկ իսկական դարագլուխ կը բանայ... Եթէ միապետութեան անկումը և սահմանադրութեան հաստատութիւնը այդ բնաշրջման առաջին կարևոր գործողութիւնը եղաւ, եթէ ընդհանուր ձայնտուութեան յաղթանակը անոր երկրորդ նշանաւոր քայլը հանդիսացաւ, համեմատական ներկայացուցչութիւնն ալ երրորդ նշանակելի փուլը պիտի ըլլայ։ Ժողովրդական գերիշխանութեան սկզբունքը և ռամկավարութեան շրջանը կըսկսի բացարձակ միապետութեան մահով, կը զարգանայ ընդհանուր ձայնտուութեամբ և կը հանգչի համեմատական ներկայացուցչութեան։ Ներկայ դրամապետական (capitaliste) հասարակակարգի մէջ, այսօրուան դասակարգային շեշտուած տիրապետութեան ներքև՝ ադկէ զատ ուրիշ աւելի իրական, աւելի հաստատուն միջոց չկայ ընդհանրութեան քաղաքական իրաւունքները երաշխաւորող։

Ընտրողական այս արդար ձևին հակառակորդները—անկարող անոր սկզբունքային ակնյայտ առաւելութիւններու հանդէպ — ասպարէզ կը նետեն այն կարծեցեալ գործնական անյարմարութիւնը, բարդութիւնը, որ իբր թէ կապուած է անոր հետ։ Այդ հակառակորդներու կարծիքով գիւղացիական շրջանները կրնան միայն քաղաքական պարզ ձևեր ու սիստեմներ ըմբռնել և գլուխին կը կորսնցնեն համեմատական ներկայացուցչութեան հանդէպ։

Ֆրանսացի հռչակաւոր հռետոր և մեծանուն հրապարակագիր Ժան Ժորէս իր գեղեցիկ ու իմաստալից ճառին մէջ—որմէ կը քաղենք մենք քանի մը տեղեկութիւններ — արտասանած ֆրանսիական խորհրդարանին մէջ ի նպաստ համեմատական ներկայացուցչութեան՝ ցոյց կուտայ այդ կարծիքին անհիմնութիւնը։ Դանըմարկի և Նորվեգիոյ մէջ երկար ատենէ ի վեր կը գործադրուի ընտրողական այս ձևը։ Եւ փորձը ցոյց կուտայ, որ գերազանցապէս գիւղացիական կազմ և տնտեսութիւն ունեցող այդ երկիրները ոչ մէկ դժուարութիւն չեն կրեր անոր գործադրութեան ժամանակ։ Գերմանիոյ հարաւային մէկ-երկու երկիր—

Բաւարիա և Վիւրտենբէրգ—նոյնպէս ընդգրկած են համեմատական ներկայացուցչութիւնը։ Հոսալ անոր կիրառումը կապած չէ գործնական դժուարութիւններու հետ, չնայելով, որ այդ երկիրներու մէջ տիրապետող է երկրագործական տարրը, գիւղացիական հասարակութիւնը և հողային արդիւնաբերութիւնը։ Զուիցերիոյ շատ մը նահանգներու մէջ, ուր համեմատական ներկայացուցչութիւնը գոյութիւն ունի, հասարակութիւնը բնաւ բարդութիւններու ենթակայ չէ այն կիրառելու ատեն։ Եւ սակայն Զուիցերիոյ ազգաբնակութիւնը արդիւնաբերական, գործարանական, քաղաքային ազգաբնակութիւն չէ։ Գիւղացիական և լեռնային ազգաբնակութեան տիպն է անիկա։

Ժընէվի արմատական թերթը, „Le Genevois“, որ միշտ պայքարած է համեմատական ներկայացուցչութեան դէմ, 1892 թուականի նոյեմբերի 15-ին հետեւեալը կը գրէր. „ընտրական գործողութիւնները տեղի ունեցան արագ և անսխալ։ Մենք առանց դժուարութեան կ'ընդունինք, որ այս տեսակէտով մենք սխալած ենք“։

Բէլժիքայի մէջ ևս տեղի ունեցած փորձերը չափազանց հրահանգիչ են։ Համեմատական ներկայացուցչութեան առաջին ամբողջական գործադրութիւնը այդ երկրի մէջ, օրէնսդրական ընտրութիւններու համար, տեղի ունեցաւ 1900 թուի մայիսին։ Եւ ահա թէ ինչ կ'ըսէ գործին տեղեակ մէկ ծերակուտական. „Ոչ ոք այլ ևս չպիտի համարձակի այս սիստեմին բարդութիւնը տարաձայնել։ Համեմատական ներկայացուցչութեան պաշտպաններն իրենք շատ մտահոգ էին այդ առիթով՝ ինկատ առնելով ռէժիմին նորութիւնը և մեծ մասամբ անգրագէտ ընտրողներու զանգուածները։ Սակայն բոլոր գործողութիւնները կատարուեցան նոյնպիսի ճշտութեամբ և արագութեամբ, նոյնպէս, ինչպէս կատարուած էին մեծամասնական ռէժիմին ներքև։ Այժմ արտասահմանի մէջ միայն կը զրուցեն մեր ընտրական սիստեմին բարդութիւններու մասին“։ Համեմատական ներկայացուցչութեան թշնամիները համաձայն են այս գնահատութեան և հարկադրուած կ'ընդունին, որ գործնական դժուարութիւններու մասին իրենց ըրած մարգարէութիւնները վաղաժամ և անհիմն են եղած։

Այսպէս. կեանքին փորձերը ապացուցին, որ թէ գիւղական և թէ քաղաքային հասարակութիւններու ընտրական սովորութիւններուն, քաղաքական ըմբռնումներուն և հասարակական զարգացման հակառակ և անհամապատասխան չէ համեմատական ներկայացուցչութիւնը։ Եւ եթէ այդ սիստեմին առաջին իսկ գործադրութեան պահուն ընտրող զանգուածները կրցան արագութեամբ և կանոնաւորութեամբ իրենց քաղաքացիական պարտքերնին կատարել—անշուշտ ապագային, վարժութեան և դաստիարակութեան հետևանքով, աւելի ևս անթերի կը կիրարկեն յիշեալ սիստեմը։

Համեմատական ներկայացուցչութեան այս իրական առաւելութիւններն ու օգտակարութիւնը անոր ամենալաւ յանձնարարութիւնները եղան։ Արդարութեան տեսակէտը, ժողովրդական գերիշխանութեան սկզբունքը հետզհետէ զարգանալով քաղաքական հիմնարկութեանց մէջ՝ իրենց հետ առաջ մղեցին համեմատական ներկայացուցչութիւնը, որ իրենց ծնունդն էր և որու շնորհիւ իրենք պէտք է ամրապնդէին ու ամբողջանային։

Եւրոպայի և Ամերիկայի մէջ յօգուտ նոր ընտրողական ձևի սկսած շարժումը զարմանալի արագութեամբ առաջ կ'ընթանայ։ Տարէ տարի անոր համակիրներու թիւը կը շատանայ կանոնաւոր ու հաստատուն աճեցողութեամբ։ Ռամկավարական երկիրներու մէջ անոր յաղթանակը կամ՝ իրագործուած է արդէն կամ շատ մօտ է իրականանալու։ Զուիցերիոյ համաժողովրդական ընդհանուր քուէարկութենէն երևաց, որ երկիրը անդառնալի կերպով դէպի համեմատական ներկայացուցչութիւն կերթայ։ Նահանգական խորհրդարաններէն բացի զուիցերացիք կը ձգտին ընտրողական այդ բարենորոգումը հիմք դարձնել նաև համադաշնակցական օրէնսդրութեան ու Ազգային Ժողովին (*Conseil National*)։ Տասը տարի առաջ կայացած ժողովրդական քուէարկութեան ատեն ռէֆօրմի հակառակորդները 75,000 ձայնի մեծամասնութիւն ունէին։ Այս տարի անոնց մեծամասնութիւնը 52,000-ով պակասեց և իջաւ ընդամենը 23,000-ի։ Սա մէկ այնպիսի մեծամասնութիւն է, ողորմելի ու անկայուն, որ շատ դիւրաւ տեղի պիտի տայ առաջիկայի քուէարկութեան։

Համեմատական ներկայացուցչութեան գաղափարը երկար տարիներ պայքար կը մղէր նաև Բէլժիքայի մէջ։ Մեծամասնական սիստեմը այդտեղ խայտառակութիւններ ծնուց։ Ամբողջ երկիրը խաղալիք դարձաւ։ Ազգաբնակութեան մէկ աննշան մեծամասնութիւնը՝ յենուած տիրող բէժիմին վրայ՝ կը ճնշէր, կ'անիրաւէր միւս մասը, քաղաքացիներու մեծաքանակ բանակներ, որոնք կը կամենային նոյնպէս մասնակցիլ հայրենիքի օրէնսդրութեան, որոնք կը բաղձային ներկայացուցիչ ունենալ պետական բարձրագոյն հաստատութեան մէջ։

Մեծամասնական սիստեմին առաջացուցած աւերածէն ու աղաղակող անարդարութենէն սկիզբն առաւ համեմատական ներկայացուցչութիւնը և յաղթանակեց 1900 թուականին։

Շարժումը հետզհետէ տարածուեցաւ նաև ուրիշ վայրեր։ Եւ այսօր համեմատական ներկայացուցչութիւնը գոյութիւն ունի Բաւարիա, Վիւրտեմբերգ, Դանիմարք, Շուէդիա, Նորվեգիա, Ֆինլանդիա, Ամերիկեան հանրապետութեան մէկ քանի կանտոններու մէջ...

Ֆրանսա, որ իր մեծանուն յեղափոխականներով ու համբաւաւոր ընկերաբաններով—Մեծ Յեղափոխութեան դիւցազնական ժամանակներէն սկսեալ—եղած է համեմատական ներկայացուցչութեան գաղափարին ստեղծագործողը, գործնականին մէջ բաւական յապաղած է։ Այստեղ ալ, սակայն, խնդիրը միանգամայն սպառած կարելի է նկատել։ Անցեալ տարի կայացած խորհրդարանական բուռն ու փոթորկոտ վիճաբանութիւններէն կ'երևայ, որ մօտ ապագայի մէջ Ֆրանսան ևս պիտի գործադրէ իր յղացած ու պաշտպանած մեծ սկզբունքը։ Ինքը կառավարութիւնն ու անոր կուսակցութիւնը բարենորոգումը չեն մերժեր սկզբունքով, այլ միայն կը ձգտեն քանի մը տարի յետաձգել այն։

Մեծամասնական սիստեմին բարեկամներուն և տիրապետող դասերուն հակառակորդութիւնը պատմական-ընկերաբանական լուրջ հիմնաւորութիւն չունի այլևս ու ռամկավարութեան զարգացման հետ՝ անշեղ առաջ կ'ընթանայ և համեմատական ներկայացուցչութիւնը...

Թիւրքիոյ համար ընտրողական այս ձևը մեծ կարևո-

րութիւն կը ներկայացնէ։ Մեծամասնական սիստեմը և որոշ տարրի, որոշ կուսակցութեան մը տարամերժ տիրապետութիւնը հոն կրնան տխուր երևոյթներ յարուցանել. երևոյթներ, որոնցմէ երկիրը ծանրապէս կը տուժէ։ Այդ բացառիկ դրութենէն դուրս ելնելու համար՝ Թիւրքիան պէտք չունի նոր գաղափարներ յղանալ, նոր միջոցներ ընտրել։ Պատմութիւնը և ուրիշ երկիրներուն մեծաքանակ փորձերը բաւականաչափ դիւրացուցած են անոր յառաջադիմութեան գործը։

Այստեղ, ինչպէս և միւս թէ՛ քաղաքական և թէ՛ ընկերական բարենորոգումներու մէջ՝ Թիւրքիան իբրև ուղեցոյց պէտք է ունենայ ընկերաբանական երկու նշանակելի սկզբունք։ Նախ՝ „որ զփորձ արեալ է, կարող է փորձանաւորաց օգնական լինել“։ Ստոյգ է և դպրոցական մանուկներուն անգամ յայտնի է այն տարրական ճշմարտութիւնը, թէ պատմութիւնը ոստիւն չի հանդուրժեր։ Բայց այս ճշմարտութիւնը բնաւ չի հակասեր այն խորունկ ճշմարտութեան՝ թէ բոլոր ժողովուրդները, անհատները յառաջադիմութեան աստիճաններուն վրայ չեն կրկներ ու չպիտի կրկնեն բարեշրջման բոլոր վայրկեանները։ Քաղաքակրթութեան օրէնքները այդքան խստասիրտ չեն։ Այլապէս անհասկանալի ու անիմաստ կը դառնային քաղաքակրթութիւնն ալ, պատմութիւնն ալ։ Նախնական պարզունակ լաստերէն, ժամանակի ընթացքին մէջ, բարեշրջումի օրէնքներով, քաղաքակիրթ ժողովուրդները եկեր հասեր են հսկայական ու կատարեալ գործուած շոգենաւերու։ Ծովագնացութեան այդ երկու գործիքներու մէջ դարեր են երկնցած։ Անկարելի է պահանջել, որ ամեն մի նոր ժողովուրդ, ծովերու վրայ շրջագայելու համար, սկսէ նախ լաստերէն, ապա անցնէ բազմաթիւ միջին վայրկեանները, ապա նոր միայն շոգենաւին։ Սկսնակ ժողովուրդները կրնան անմիջապէս ձեռք առնել շոգենաւը։

Քաղաքական և հասարակական կեանքին մէջ այս ճշմարտութիւնը քիչ մը խաչաձևութիւններ ու բարդութիւններ ունի, անկասկած. մանրամասները յաճախ չափազանց մութ են և խորհրդաւոր։ Բայց սկզբունքը, իր հիմնական գծերով, այստեղ ևս տիրապետող է։

Բնաւ անհրաժեշտ չէ, որ ամեն մէկ նոր հասարակութիւն—գործադրելու համար քաղաքական որևէ ձև կանգնած ըլլայ մտաւոր, բարոյական, տնտեսական միևնոյն մակերևոյթին վրայ, ինչ որ այն հասարակութիւնը, որ յղացեր և գործադրեր է զայն նախնականապէս։ Ճշմարտութիւններ գտնելու և անդրանկօրէն կիրառելու համար հարկաւոր է աւելի ուժգին եռանդ և աւելի խորունկ իմաստութիւն՝ քան այդ ճշմարտութիւնները կրկնելու և անդրանիկ գործադրողին հետևելու համար։

Երիտասարդ Թիւրքիան պէտք չէ լուսաւոր գաղափարներու առաջ պատնէշներ տնկէ շարունակ՝ պատրուակելով մեր երկրի մտաւոր և տնտեսական յետամնացութիւնը։

Անհրաժեշտ է միշտ յուշ ածել պատմութիւնը և ունկնդրել ուրիշ ժողովուրդներու փորձերը։

Ընդունել այս նշանաբանը, ըսել չէ՝ ուրանալ տեղական պայմաններու հանրածանօթ խնդիրը. ինչպէս և յապաւել բնաշրջման միջին վայրկեանները և չկրկնել զանոնք, ըսել չէ պատմութեան մէջ ոստիւններ գործել և ընդհանուր շղթային գեղեցկութիւնը աղաւաղել...

Հասարակական-քաղաքական կեանքին մէջ յաճախ կրնայ պատահիլ, որ գաղափարներ ու սկզբունքներ յղացող ժողովուրդը, երկիրը ուրիշներէն աւելի ուշ գործադրէ իր իսկ յղացումները։ Պատմութիւնը ազդեցութիւններու և հակազդեցութիւններու անընդհատ բաղխումն է։ Յառաջադիմութիւնը կը չափուի այդ երկու գործօններու տարբերութեամբ, մնացորդով։ Ոևէ յառաջադէմ մտաւորական հասարակութիւն կըստեղծագործէ նոր ձև մը։ Այս ձևը հնին հետ մրցման մէջ կը մտնէ և կը յաղթանակի միայն այն ժամանակ, երբ դիմադրութիւնն աւելի նւազ ըլլայ քան ներգործութիւնը։ Նոր ձևի յղացման ու գործադրութեան միջև ժամանակը կրնայ կարճ տևողութիւն ունենալ, կրնայ նաև չափազանց երկարել։ Մէկէ աւելի ուժեր ու չափազանց բարդ հոսանքներ պատճառ կ'ըլլան այս կամ այն հետևանքին։

Հասարակական այդ ուժերը միշտ փոփոխական են ու զանազանակերպ՝ նայելով տեղին, միջավայրին և ժամանակին։

Ֆրանսան յղացաւ համեմատական ներկայացուցչութեան սկզբունքը, բայց աւելի կանուխ Բելժիքան գործադրեց։ Մեծ ազգերը յղացան կանանց հասարակական իրաւունքներու գաղափարը, բայց աւելի վաղ Ֆինլանդիան և հայերը գործադրեցին։ Տասնութերորդ դարու Ֆրանսիական հանճարը յայտնագործեց „մարդու անբռնաբարելի իրաւունքները“, բայց աւելի շուտ Հիւսիսային Ամերիկան իրականացուց։ Եւրոպական ազգերը խորհրդարանական ռէժիմի հիմք հռչակեցին նախարարութեան պատասխանատուութիւնը—բայց Ռուսաստանէն և Գերմանիայէն աւելի Թիւրքիան իրագործեց այդ քաղաքական իմաստութիւնը։

Այսպէս գաղափարները չեն բանտարկուիր իրենց հայրենիքի մէջ, կ'արշաւեն ամեն երկիր, կը յաճեն ամեն միջավայր և կ'իրականանան հոն, ուր աւելի քիչ ընդդիմութեան հանդիպեն.

Թիւրքիոյ քաղաքական, հասարակական, տնտեսական վերանորոգութեան համար չափազանց հրահանգիչ են այդ երկու սկզբունքները։ Անոնք կրնան խրախուսել օսմանեան նորազատ երկիրը իր ապագայ յաղթանակներու մէջ և առաջնորդել սուլթաններու հինաւուրց պետութիւնը դէպի ռամկավարութեան ու հաւասարութեան իդէալները։

Իր սահմանադրական կեանքին կարճատև ընթացքին մէջ նոր Թիւրքիան ցոյց տուաւ—քանի մը սակաւաթիւ, բայց նշանակելի օրինակներով—որ ան չուզեր Գերմանիոյ և Ռուսաստանի քաղաքական „իմաստութեան“ աշակերտել։

Ժողովրդական ներկայացուցչական մարմնին և թագաւորին յարաբերութիւնները մէկ կողմէ, նոյն մարմնին և նախարարութեան յարաբերութիւնները միւս կողմէ կը կրեն շիտակ պարլամենտականութեան դրոշմ։

Համեմատական ներկայացուցչութեան խնդիրը այսպիսի պայմաններու մէջ պէտք է որ անյաղթելի արգելքներու չհանդիպէ։ Կառավարութիւնը պիտի հասկանայ, որ անկեղծ պարլամենտարիզմը և ռամկավարու-

թիւնը միայն այն ժամանակ կ'իրագործուին, երբ երկրին բոլոր հիմնական տրամադրութիւնները ըստ կարելւոյն արձագանք գտնեն խորհրդարանին մէջ, երբ պետութեան բոլոր տարրերը մասնակցեն վերին օրէնսդրութեան։

Հակամարտութիւններն ու հասարակական տարբերութիւնները Թիւրքիոյ մէջ — աւելի քան այլուր — հին վատահամբաւ պատմութեան ստեղծած հետևանքով՝ սուր են ու խորունկ։ Օսմանեան քաղաքացիներու փոխադարձ թշնամութիւնն ու ատելութիւնը հին կառավարութիւնների գաւանանքն է եղած։ Բռնակալութեան տիրապետութիւնն ու կայունութիւնը այդ ճանապարհի ու այդ քաղաքականութեան մէջ կը տեսնուէր։

Զարհուրելի է այն բարոյական աւերածը, այն հասարակական աղէտը, որ նոր Թիւրքիան ժառանգութիւն ստացաւ իր արիւնածարաւ նախորդէն։

Կեդրոնախոյս ուժերը շարժման մէջ են, պետութեան ամբողջութիւնը պահպանող մեքենան անյուսալի դանդաղութեամբ կը գործէ։ Քաղաքացիական համերաշխ ու ներդաշնակ կապի փոխարէն՝ խտրականութեան ոգին կը թագաւորէ։

Քրիստոնէի ու մահմեդականի խնդիր, հաւատացեալի ու անհաւատի խնդիր, հայի, Թուրքի, արաբի, յոյնի, մակեդոնացու աղէտալի խնդիրներ։ Ադոնց հետ քով քովի դրէք նաև տէր ու ծառայի, շահագործողի ու շահագործուողի յաւիտենական խնդիրները և դուք կը տեսնէք նոր Թիւրքիոյ ամենամեծ վէրքը։

Հասարակական այդ բոլոր հակամարտ ուժերը կը շարժուին, կը գալարուին, կը վխտան ի վնաս Թիւրքիոյ ներքին միութեան ու պետական համերաշխութեան։ Պէտք է մեղմել, ամոքել ընդհարումը։ Պէտք է կանոնաւորել յարաբերութիւնները ո՛չ թէ այս կամ այն տարրի գլուխը կոտրելով, այլ բոլոր տարրերու իրաւունքները յարգելով։ Պետութիւնը պէտք է պատկանէ ամենուն։ Քաղաքական - օրէնսդրական իրաւունքները պէտք է խոստովանուին ամենուն։ Խորհրդարանը պէտք է կազմուէ ամենէ։ Կրոններու, դաւանանքներու, ազգութիւններու, դասակարգերու հաւասարութիւնը ո՛չ թէ միայն պէտք է արձանագրուի թղթի վրայ, այլ և պէտք է իրականանայ։ Այլապէս անկարելի է մեղմել դարաւոր հակամարտութիւնը, անհնարին է քաղաքացիական միութիւն ստեղծել, որ այնքան հարկաւոր է նոր Թիւրքիոյ։ Հին ուրուականը կ'ապրի և պետութեան վերանորոգութիւնը իր առջև լուրջ արգելք կ'ունենայ...

Մեր յետագայ յօդուածներու մէջ առանձնապէս կանգ պիտի առնունք կրօնական ու ազգային խնդիրներու և յարաբերութիւններուն վրայ։ Առ այժմ կ'ընդգծենք միայն սա կարևոր իրողութիւնը, այն, որ համեմատական ներկայացուցչութեան սկզբունքը կը բարդուի վերոյիշեալ կնճռոտ հարցերով։

Ակնյայտնի փաստ է, որ Թիւրքիոյ մէջ հասարակական հակամարտութիւններէ, դասակարգային տարբերութիւններէ զատ՝ կը սկզբնաւորուին և՛ կրօնական և՛ ցեղական և՛ ազգային տարբերութիւններէն։ Ո՞րը պէտք է ընդունել հիմնականը, կեդրոնականը. որո՞վ պէտք է ղեկավարուիլ։ Արդեօք ազգային-կրօնական համախմբումնե՞րը պէտք է դառնան մեկնման կէտ, հիմունք համեմատական ներկայացուցչութեան, թէ՞ դասակարգային տարբերութիւնները։

Ինչպէս կը տեսնէք, խնդիրը չափազանց բարդ է ու խճճուած։ Ցամենայն դէպս, ակներև է, որ առանց յարգելու այս կամ այն համախմբման իրաւունքները, ուրեմն և առանց համեմատական ներկայացուցչութեան գործադրութեան՝ օսմանեան պետական միութիւն ու համերաշխ քաղաքացիական կեանք անկարելի է հաստատել։

Հասարակական կեանքին մէջ անշուշտ գոյութիւն ունին—ազգային համախմբումներու քով—և դասակարգային համախմբումներ։ Հողային հարցին դժբախտ պատմութիւնը ցայտուն կերպով կը հրապարակէ այս իրողութիւնը։ Հայերը ոչ թէ միայն կը նեղուին Թիւրք հողատէրերէն, այլ և հայ աղաներէն. քիւրդերը մանաւանդ, քիւրդ աշխատաւոր բանակը կը տնքայ ոչ թէ հայերու թշնամութենէն, այլ իր իսկ ցեղին կալւածատէրերէն։ Այս ճշմարտութիւնը բացայայտ է ու փայլուն։ Որքան ալ ճառեն Թիւրք աշխարհին յետամնացութեան ու անտեսական ստոր վիճակին մասին՝ այնուամենայնիւ անուրանալի է երկու դասակարգերու — շահագործողին ու շահագործուողին — ներկայութիւնը, ընդհարումը, հակամարտութիւնը։ Կեանքին մէջ տարբերութիւնները կրկնակի են։ Ազգային և դասակարգային հակամարտութիւնները—եթէ կարելի է այսպէս արտայայտել — համադրուած են։ Պետութիւնն ալ իր կողմէն պիտի համադրէ համեմատական ներկայացուցչութեան մէջ դասակարգային և ազգային սկզբունքները... Աշխատելով ապահովել յոյնին մուտքը խորհրդարան — Թիւրքին հետ միասին — պետութիւնը պէտք է աշխատէ ապահովել նաև յոյն աշխատաւորին մուտքը՝ դրամատէրին հետ հաւասար։ Եթէ, օրինակ, յոյն միջավայրին մէջ բուրժուական կուսակցութիւնները ունին 100,000 ընտրողական ձայներ, իսկ աշխատաւորները 50,000—արդարութեան հիմունքով՝ բուրժուական կուսակցութիւններու երկու պատգամաւորին քով, խորհրդարան պիտի երթայ աշխատաւորներու մէկ պատգամաւորը։ Մեծամասնութիւն կազմող բուրժուազիան չպէտք է կլանէ պատգամաւորական երեք աթոռներն ալ և փոքրամասնութիւն կազմող աշխատաւորութիւնը չպէտք է ձեռնունայն ու անիրաւած մնայ...

Այս տեսակէտը պէտք է ղեկավար սկզբունք դառնայ կառավարութեան համար։ Պետութեան բոլոր մասերու մէջ պէտք է ձգտիլ կիրարկել արդարութեան հրահանգները։ Ընտրողական այս կրկնակի հիմքերը գործնականին մէջ կրնան փոքր ինչ բարդութիւններ ստեղծել։ Կանոնաւոր կազմակերպութիւնը, սակայն, թերևս յաղթէ ամեն դժուարութիւն։ Եւ եթէ այնուամենայնիւ բարդութիւնները բոլորովին չվերնան՝ միշտ նախընտրելի է՝ անհրաժեշտ ու լաւագոյն սկզբունքի մը համար քիչ մը պարզութիւն ու դիւրութիւն զոհաբերել։ Ժամանակի ընթացքին, պետութեան ընդհանուր վերակազմութեամբ, կրթութեան ու գիտակցութեան տարածումով, ազգային հակամարտութիւններու մեղմացումով, դժուարութիւններն ու բարդութիւնները կ'անհետանան և պետութեան մեքենան անսայթաք առաջ կ'ընթանայ։

Հարկաւոր է միայն այն, որ պետութեան վարիչները, Երիտասարդ Թիւրքիոյ քաղաքագէտներն ու հրապարակագիրները ակներև կերպով ցանկանան հետամտիլ

ռամկավարական սկզբունքներուն։ Սուիններու վրայ մշտապէս ու յարատև չէ կարելի հիմնել սահմանադրութիւնը։ Ասոր համար աւելի կայուն, աւելի հաստատ, աւելի անդաւաճան նեցուկ պէտք է գտնել։ Երկրին վերին դասերը անկեղծօրէն ու անհրաժեշտաբար սահմանադրականներ չեն։ Այդ դասակարգերու պահպանութեան յանձնել երկրին ամենաթանկ ուանդը՝ կը նշանակէ ըմբոստանալ պատմութեան ու իմաստութեան դէմ։

Աշխատաւոր ընդհանրութիւնը միայն — լուսաւոր, գիտակից, քաղաքական իրաւունքներու տէր — կրնայ պահպանել այն հիմնարկութիւնը, առանց որու օսմանեան պետութիւն, թիւրքիոյ ամբողջութիւն գոյութիւն չունին։

Երիտասարդ Թիւրքիան պէտք է լաւ ըմբռնէ այդ դասակարգին քաղաքական-հասարակական բովանդակ նշանակութիւնը։ Անոր դերը մեծ է նոր Թիւրքիոյ վերածնութեան ու վերանորոգման գործին մէջ...

Համեմատական ներկայացուցչութիւնը — ընտրողական միւս ռամկավարական ձևերու հետ — այն առաւելութիւնն ունի, որ պիտի բարձրացնէ ստորին, գետնատարած խաւերը, պետութեան իսկական սիւները։

Այսպէս. ընդհանուր, ուղղակի, գաղտնի հաւասար ձայնատուութիւնները միանալով համեմատական ներկայացուցչութեան հետ պիտի երաշխաւորեն ռամկավարութեան յաղթանակը, ժողովրդական գերիշխանութեան իրականացումը, արդարութեան պահանջը այնքան, որքան հնարաւոր է ժամանակակից դրամատիրական հասարակակարգի մէջ...

Անոնց վրայ պէտք է հիմնէ իսկական պարլամենտը...

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ս.-Ր.-ՆԵՐԸ ԵՒ ԶԻՆԻԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

(ՆԱՄԱԿ ՊԱՐԻԶԻՑ)

Այդ մեծ խնդիրն ևս ծեծուում է այսօր արտասահմանեան ռուս-յեղափոխական մամուլի մէջ։ „Դրօշակի“ անցեալ համարում տեսանք ս.-դ.-ների (սօցիալ-դեմօկրատների) խաղացած դերը „զինուած ապստամբութեան“ գործում։ Տեսանք, թէ որպիսի անդունդ է ձգուած նրանց խօսքի ու գործի միջև։ Խօսքով — կատաղի ապստամբականներ, զէնքի ու վառօդի ջատագովներ, գործով — համեստ „էկոնօմիկներ“ և ողբալի կրաւորականներ...

Տեսանք այդ ցայտուն հակադրութիւնը նոյնիսկ ս.-դ.-ական ընդարձակ Տեղեկագրի մէջ, ներկայացուած Կոպենհագի Սօցիալիստական Համագումարին։ Ամեն առթիւ, ամեն քայլափոխում ճչալ, քարոզել „ընդհանուր, զինուած ապստամբութիւն“, իսկ վճռական վայրկեաններում էքանալ հրապարակից, սահմանափակուել մի քանի խըղճուկ ու „որոտընդոստ“ թռուցիկներ ու մանիֆէստներ հրատարակելով — ահա թէ ինչի է վերածուում ռուսական մեծածաւալ կուսակցութեան դերը այդ ամենաչարաշանչ ու ամենահրատապ խնդրի դիմաց։

Այդտեղ է և ռուս յեղափոխութեան ամբողջ տրագիզմը։ Եւ նա ցոլում է մի առանձին ողբերգականութեամբ նոյն Տեղեկագրի այս չափազանց նշանակալի և ակամայ յայտնութեան մէջ.

— Կուսակցութեան առաջապահիկ մարտիկներն անգամ դեռ չը գիտէին զէնք գործածելու եղանակը...

Երբ այդպէս է իրականութիւնը, ապա բոլոր այդ խանդավառ ճառերն ու յորդորները զինուած ճակատամարտների մասին՝ հնչում են որպէս դառն ու յանցաւոր մի կատակ...

Խօսւում է զինուած ապստամբութեան մասին և ս.-ր.-ական (սօցիալիստ-յեղափոխական) հրատարակութիւնների մէջ։ Ջետեղուած է մի ընդարձակ ու լուրջ ուսումնասիրութիւն „Սօցիալիստ-Ռէվօլիւցիօնէր“ կոչուած եռամսեայ հանդէսում (№ 2)։ Մխիթարւում էք, գտնելով այդտեղ՝ թէ աւելի անկեղծութիւն և թէ մանաւանդ աւելի համեստութիւն ու համապատասխանութիւն խօսքի ու գործի միջև։ Նկատենք, որ եթէ կայ մի կուսակցութիւն բուն ռուսական միջավայրում, որ կարող է շատ թէ քիչ իրաւունքով ու համարձակութեամբ խօսել „զինուած“, դաւադրական ու ապստամբական ձեռնարկների մասին — դա ս.-ր.-ներն են։ Ի՞նչ են ասում նրանք։ Շեն բարձրաձայն ծանուցանում իրենց հայրենակից ս.-դ.-ների պէս, թէ իրենք միանգամայն „պատրաստ էին“, „հասունացած“ Յեղափոխութեան բոլոր պահանջների հանդէպ, այլ խոստովանում են, ընդհակառակը, որ զինուած ապստամբութեան գործը — փրկութեան միակ միջոցը — եղել է սկզբից ի վեր ընդհանրապէս խ-խուռ, անկազմակերպ, արատաւոր վիճակի մէջ և որ այդ մեղքի մի մասը ծանրանում է իրենց իսկ յեղափոխականների վրայ։ Կարելի էր այլ կերպ տնօրինել, եթէ յեղափոխականները կամենային, եթէ նրանք փորձէին սկզբից իսկ աւելի մեծ ճիգ կենտրօնացնել այդ գործնական, բուն ռազմական մտահոգութիւնների վրայ... Այդ է, որ չի եղել, տարաբախտաբար, և այդ ծանր վրիպումին էին նուիրուած „Դրօշակի“ վերջին մի շարք յօդուածները։ Ռազմական մտահոգութիւնները երկրորդական, երրորդական խնդիր են եղել ամբողջ ռուս յեղափոխական բանակի, մասնաւորապէս ս.-դ.-ների մէջ։

Եւ չը պիտի զարմանալ, որ իբրև հակազդեցութիւն, ռէակցիա այդ ցաւալի տրամադրութեան դէմ, ծնունդ է առնում այսօր մարտական թևը երկու մեծ կուսակցութիւնների ծոցում։ Առաջ են գալիս ս.-դ.-ական աւելի համարձակ տարրեր — „օտզօվիստներ“ ևն — որոնք յորդորում են զբաղուել եռանդով մարտական խմբերի կազմակերպութեամբ, յորդորում են ստեղծել ապագայ զինուած բանակի կորիզները ժողովրդական շարքերում, վարժեցնել երիտասարդութիւնը զէնքի գործածութեան ևայլն։

Դա մի փրկարար սթափումն է, որ դժբախտաբար, առ այժմ շատ փոքրիկ ծաւալ ունի, բայց որ, յուսով ենք, պիտի աճի հետզհետէ — դէպքերի հրամայական թելադրութեան տակ — պիտի աճի անգամ այն խաղաղ, կրաւորականութեան թոյնով տոգորուած օրգանիզմի մէջ, որի անունն է սօցիալ-դեմօկրատիա։

Բաւական զւարճալի „էւոլիւցիա“ է կրում և ս.-ր.-ական կուսակցութիւնը։ Աւելի յանդուգն ու գործ-

նական, քան սոց.-դեմոկրատիան, աւելի վառած կռւի կրակով և աւելի գիտակ ուժերի իրական փոխ-յարաբերութեան՝ ս.-դ.-ական կուսակցութիւնը ևս, սակայն, չի զբաղւել մինչև օրս պատշաճ չափով բուն ռազմական պատրաստութեան աշխատանքով, չի տալ նրան այն ծանրակշիռ կարևորութիւնը, որ ունի նա Ռուսաստանի պէս մի երկրում և կենտրոնացրել է իր ճիգերի մեծագոյն մասը դարձեալ սոցիալական, տնտեսական աշխատանքի վրայ։ Հոչակաւոր „մարտական կազմակերպութիւնը“, որի հոգին էր երկար տարիներ Եվո Ազեվ, չէր էլ զբաղւում զանգւածային մարտական պատրաստութեամբ, այլ սոսկ միայն անհատական տերրորներով։ Փորձեր եղել են ընդհանուր ու զինւած ապստամբութեան՝ ս.-դ.-ների ազդեցութեան շրջաններում—բայց խեղդւել են խանձարուրի մէջ, որովհետև կազմակերպւած են եղել խակ, անկայուն, անձեռնհաս ձևով։ Փորձեր եղել են մասնաւորապէս զինւորական ապստամբութիւն յորուցանելու, բայց նրանք ևս վիժել են վաղաժամ, նոյն էական պատճառներով։ Այդ պատճառների էութեամբ է զբաղւում ս.-դ.-ական վերոյիշեալ յօդւածը, որի մասին մենք դեռ կը խօսինք „Դրօշակի յաջորդ համարում։

„Անզօրութեան գիտակցութիւնը“ տանջում է մասնաւորապէս ս.-դ.-ներին, որոնք, կրկնում ենք, աւելի յաւակնութեամբ իրաւունք ունին փաստաբանելու իրենց դերը ռուս երիտասարդութեան մարտական դաստիարակութեան գործում։ Անցեալ վրիպումների յուշերը թելադրում են նրանց՝ հիմնականապէս վերաքննել իրենց տակտիկային դաւանանքը։ Եւ ահա այստեղ ևս առաջ է գալիս փոքրիկ զանազանաւորում, „դիֆֆերենցիացիա“։

— „Բախտ ունիմ հաղորդելու Ձեզ, որ մեր շարքերում երևան են գալիս երիտասարդ-թիւրքեր“...

Այսպէս քիչ առաջ յայտարարեց ինձ — կատակի ձևով — սոց.-յեղափոխական կուսակցութեան առաջին թէօրետիկոսը։

— Շնորհաւորում եմ գործնական բանականութեան յաղթանակը — եղաւ պատասխանը։

— Ձեզ շատ ուրախանայ, քանի որ նրանք նպատակ ունին որդեգրելու երիտասարդ-թիւրքերի „հեգեմոնիական“ քաղաքականութիւնը հանդէպ ոչ-ռուս ազգութիւնների։

— Թող լինի այդպէս... Միայն թէ որդեգրեն նաև երիտասարդ-թիւրքերի գործելակերպի դրական կողմը, նրանց գործնական յեղափոխութեան տակտիկը...

(Կը շարունակի)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՄԻ ԷՋ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՅԵՂԱՓ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ԶՈՀԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆԻ «ՅԱՇԸՈՒԹԱ»-ԻՆ

1909-ի փետրւարի սկզբից Ատրպատականի յեղափոխական ուժերը ստւարացած՝ մի կողմից ուժեղ օղակով պաշարեցին Թաւրիզը, միւս կողմից յանդուգն յարձակումներ, արշաւանքներ տեղացին Սալմաստ, Խոյ, Գիւնէյ, Մարանդ, Ալամդար-Գեարգեար գաւառների գլխին։ Ձէին վհատւում թւով քիչ կռւող սահմանադրական յեղափոխականները. նեղւում էին երբեմն ռազմամթերքի քչութիւնից. այդ պակասն էլ լրացնում էր, թէև դժւարութեամբ, պարսկական Ջուլֆայի խառը մարմինը, անջումանը, որը յեղափոխութեան սկզբից մինչև վերջ Ջուլֆայի ռազմական կարևոր կէտը իր ձեռքում պահելով՝ շարունակ հայթայթեց նորանոր մարտիկների խմբեր ու ռազմամթերքի պաշար։

Ցայտուն կերպով աչքի էին զարնւում յեղափոխականների, մուջահիդների անտակտ շարժումները, որոնք այնքան սուղ նստեցին Ատրպատականի ժողովրդին։ Գաւառները գործում էին անջատ, առանց ընդհանուր ուէ ծրագրի. այսպէս, Մարանդ գիւղաքաղաքը, որ ռազմական տեսակէտից կարևոր կենտրոնակէտ է, և որը միացնող ու ապահովացնող դեր էր կատարելու ամբողջ Ատրպատականի յեղափոխութեան համար, ամենայն յաջողութեամբ ձեռք էր բերւած երեք ամիս առաջ միապետականներից. այդպիսի կարևոր մի կէտ առանց ապահովացման, մուջահիդները թողնում անցնում են առաջ, դէպի Սօֆիան, որտեղից, ըստ Թաւրիզի հրահանգի, երկու կողմից (Թաւրիզից և Սօֆիանից) առաջ գալով, շրջապատելու էին Ալվար գիւղի մօտ բանակած Ռահիմ խանի հեծելագունդին։ Վերջինը աւելի հմուտ շարժւեց. նա չէզօքացրեց գաւառները միմիանցից, ապա պարբերական յարձակումներով ահագին չարիքներ հասցրեց Գիւնէյ և Ալամդար-Գեարգեարի գաւառներին։

Ջուլֆա-Սօֆիան գիծը սահմանադրականների ձեռքումն էր։ Սօֆիանում բանակած 500—600 մուջահիդները Փարաջ աղի, Մօհսուն խանի, գիւնէյցի Հաջի Ահմադի և էքեսմիցի Ղօջ-Ալի Սուլթանի ղեկավարութեամբ անցնում են առաջ Ամմադ գիւղը, որտեղ գալիս միանում է Թաւրիզից, Մուժամբարի գծով, Սաթթար խանի ղրկած 20 հոգուց բաղկացած մի խումբ։

Միացեալ ուժերը որքան էլ աշխատում են մօտենալ, պաշարել Ալվարը և ի կատար ածել Սաթթար խանի ծրագիրը, չէ յաջողւում։ Ստիպւած, նահանջում են դէպի Սօֆիան՝ նորից կազմակերպւելու։ Ահա այդ ժամանակ, փետրւարի 8-ին, Ջուլֆան պահպանող դաշնակցական մարտիկներից 13 հոգի իր հետն առնելով հասնում է խմբապետ Տիգրան Ստեփանեանը։ Մի օր առաջ Ջուլֆայից եկած են լինում նաև անձէն վրացիներ, 9 հոգի, Թաւրիզ անցնելու նպատակով։

Մինչ այս. Ռահիմ խանը, ըմբռնելով մուջահիդների մտադրութիւնը, իր հեծեալներին բաժանում է երկու մասի. մի մասը իր ձեռքի տակ պահում է Ալվարում, միւսը, մօտաւորապէս 400 հոգի, իր տղայի, Սուջայի-լաշկեարի (բոյուկ-խան) առաջնորդութեամբ՝ ուղղում է դէպի Սօֆիան։

Եւ ի՞նչ... Շնորհիւ մուջահիդների անդիսցիպլին ու անփոյթ շարժւածքի, տեղի ունեցաւ Սօֆիանի մէջ մի չը տեսնւած ու անարգ պարտութիւն, որ զգալի կերպով նսեմացրեց Ատրպատականի յեղափոխութեան փառաւոր հմայքը։

Սուջայի լաշկեարը փետր. 10-ին, ժամը 3-ին երեկոյեան յանկարծակիի բերելով յեղափոխականներին, 2 ժամւայ յամառ կռւից յետոյ ցրում է նրանց և գրաւում է նախ Սօֆիանը, ապա տիրում Մարանդին։ Այդ օրը, Սօֆիան գիւղի մէջ, Տիգրանը առաջին անգամ մօտակայ բլրի վրայ նկատում է ինչ որ ձիա-

ւորների ձի խաղացնելիս. չորս ընկերներով առաջ է գնում հետաքրքրելու, դժբախտաբար, առանց փամփուշտակալների, միայն ձեռքերում ունենալով 15-ական փամփուշտ։

Երբ բաւականաչափ մօտենում են „զաստավի“ շինութեան կողմից դէպի կասկածելի ձիաւորները, յանկարծ լսւում է հրացանների որոտ..., և պարզւում է թշնամու խորամանկութեամբ առաջ քայլելը։ Միաժամանակ Ռահիմ խանի որդին գիւղի միւս կողմերը յարձակումն է գործում։ Տիգրանի խմբի միւս մարտիկները գիւղի զանազան կողմերում լինելով, չեն կարողանում փամփուշտ հասցնել։ 4 ընկերների հետ վերջին ունեցածները կրակելով—ընկնում են թշնամու գնդակներից „զաստավի“ շինութեան մօտ։ Թշնամու իշխող դիրքերը մուջահիդներին նեղելով, ստիպում են փախուստի դիմել։ Մի մասը Ֆարաջ աղի, Իրզակուլի խանի ու Միրզա-Բաղրի հետ ապաստան են գտնում Զուլնուզ գիւղում, որտեղից յետոյ, հաւատալով Սուջալուշկեարի երբ թէ ներման-գրութեանը, գալիս անձնատուր են լինում Մարանդում։ Սակայն, հակառակ իր խոստման, լաշկեարը „քեօնդաեակապ“ միւս գերիների հետ փոխադրում է հօր, Ռահիմ խանի բանակը, Ալվար։ Սպանւում են նաև անզէն վրացիները Ս.-Դեմոկրատ կուսակցութիւնից, որոնց դիակները նաւթով այրում են։ Ղօզալի սուլթանը միւս մասի ու 4 մարտիկների հետ նահանջում են դէպի Էյրանդիբի ու աղատւում։

Տիգրանի խմբի մնացեալ անդամները զանազան ուղղութեամբ կուելով, սպանւում են։ Այդ կռուի մէջ դաշնակցական մարտիկներից զոհւում են տաս (10) հոգի, որոնց անուն ու ազգանուններն են.

1) Տիգրան Ստեփանեան, խմբապետ, ալէքսանդրօպոլցի.
2) Յարութիւն Քիւչիւկեանց (Խենթ), կարնեցի, վերաբնակւած Ալէքսանդրօպոլ.
3) Դաւիթ (ազգանունը չը գիտենք), գօրիսեցի.
4) Աւագ Պետրոսեանց, մշեցի, Գէորգ Զաւուշի զինուորներից.
5) Նուրօ, վանեցի.
6) Յովհաննէս Յարութիւնեան, տաճկաստանցի.
7) Գէորգ Օրտուեան (Սև Գէորգ), Սալմաստի Հաւթուան գիւղացի.
8) Յովսէփ Օհաննիսեան, Խոյի Սէյվատար գիւղից.
9) Բաղշի Գաբրիէլեան, ղարաբաղցի։
10) Ստեփան Ազնաւուրեան (Արծուիկ), ուսանող Ժընէվի Համալսարանի, արտինցի։

Դժբախտաբար, զոհւածների մասին կենսագրական տեղեկութիւններ մենք չունինք։ Գուցէ կը տան իրենց ծանօթ ընկերները։

Ղարաբաղցի Բաղշու մասին ականատես պարսիկները պատմում էին հետևեալը. „Նահանջի ժամանակ Սէյվան գիւղում (Սօֆիանի մօտ), Բաղշին մի փոս տեղում դիրք է բռնում և այդտեղից աջողում է իր դէմ արշաւող թշնամիներից սպանել մօտ 25 հոգի. վերջը, մի ցածհոգի հայ մարդու դաւաճանութեամբ սպանւում է“։

Ուսանող Ստեփան Ազնաւուրեանի մասին՝ Սօֆիանի դէպքում գերւած և ապա Ղարադաղում մահմեդականացրած բրուսացի կօշկակար Կարապետ Գիւլմազեանը պատմում է հետևեալը. „Խոյից Թաւրիզ էի գնում, Սօֆիանի դէպքի ժամանակ, բազմաթիւ մուջահիդների հետ. ինձ էլ շղթայեցին։ Փետրուարի 11-ին (դէպքի հետևեալ օրը), Խմիքեամար գիւղից պարսիկները ձերբակալած, բերին ներկայացրին Սուջայի-լաշկեարին մի հայ-մարտիկի (շապիկ-ոտաշոր միայն հագին), թևերը կապկպած 2 հրացանի հետ ու պատմում էին, որ „երէկ երեկոյեան կուելով չեն կարողացել յաղթել էս ֆէդայուն, որը շեշտակի նշանառութեամբ սպանել է իր ընկերոջ հետ մեզանից 20 մարդ. ընկերոջը յաջողւեց սպանել. դրան էլ „քեօնդայեցին“ ու մեզ հետ, թւով 13 հոգի, նոյն օրը փոխադրեցին Ալվարի բանակը։ Ձերբակալւած մարտիկը ծանօթացրեց իրեն արտինցի Ստեփան Ազնաւուրեան ու պատմեց իր գլխին եկած փորձանքը։ „Սօֆիանի կուից ես ու ընկերս—„Սև Գէորգը“—շղթան ձեղքելով ու մինչև մութ գիշեր անդադար կուելով, անցանք առաջ. ընկերս խփւեց, դիրքից գլուխը անզգուշաբար վեր բարձրացնելու ժամանակ. վերցրի նրա հրացանը ու շարունակեցի մթնով ճամբաս, սահմանագրական գիւղերի ուղղութեամբ, եկայ ու իջևանեցի Խմիքեամար գիւղը։ Գիւղացիք սիրով ընդունեցին. գիշերը պառկածս ժամանակ զինաթափ արին ու կողոպտելով ահա՛ այս վիճակի մէջ այստեղ բերին“։

Ռահիմ խանը գերիների մասին կարգադրութիւն ստանալով Էյնի-դօվլէից (միապետական կառավարութեան զօրքի ընդհ. հրամանատարից), մահմեդականներին փոխադրում է Ղարադաղ, իսկ քրիստոնեաներին գնդակահարում։ Վեց օր Ալվարում պահելուց յետոյ, փետրուարի 17-ին բանակի առջև 6 գնդակներով մահացնում են խրոխտ, անվեհեր Ստեփանին. նրա հետ գնդակահարում են նաև երկու վրացիների, բնիկ Թիֆլիսեցի։ Իսկ կօշկակար Կարապետին անձամբ ծանօթ լինելով, Ռահիմ խանը ներում է, Ղարադաղում թողքացնում է նրան, ապա սահմանագրութեան վերահաստատումից յետոյ գալիս է Թաւրիզ ու մեծարւում պատւանշաններով Սաթթար խանից։

Ուսանող Ստեփանին առաջին անգամ պատահեցի 1908 թ. Բաթումի շրջանում, պրոպագանդիստի դերի մէջ։ Յաջորդ տարին տեսնելով նրան Ջուլֆայում, Բաթումից եկած մարտիկների հետ, շատ խնդրեցի, որ կռիւներին չը մասնակցէ, որովհետև ինքը իրրև մտաւոր ուժ, անհրաժեշտ է կազմակերպական գործերի համար։ Վրդովւած պատասխանեց.

„Թաւրիզից ընկերները օգնութիւն են կոչում, խիղճս չի կարող հանգստանալ, եթէ այլ գործով զբաղւեմ“...

Ուրմի ԱԼԳԱ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԱՐՏԷՄ ԵՒ ՆԻԿՕԼ

Երկուսն էլ կովկասցի են, Կիսաինտելիգենտ, 25—27 տարեկան։ Ծանօթ լինելով կուսակցութեան անցեալին և ընդհանրապէս հայ իրականութեան մէջ տրտայայտւող հոսանքներին, աւելի քան գիտակից դաշնակցականներ էին, ընդունակ՝ որոշելու իրենց վերաբերմունքը դէպի այս կամ այն հասարակական, յեղափոխական խնդիրը։

Հայ-թուրքական ընդհարումների ընթացքում գործօն մասնակցութիւն են ունեցել բոլոր կարևոր վայրերում։

ԿՈՒԻՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ



ՆԻԿՈԼ

ՆԱՀԱՏԱԿԻԱՏ 1908 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ-ՄՈՒԺԱՄԲԱՐԻ ԿՈՒՒՈՒՄ

ԱՐՏԷՄ

ՆԱՀԱՏԱԿԻԱՏ 1908 Թ. ՄՈՒԺԱՄԲԱՐԻ ԿՈՒՒՈՒՄ

ԳԷՈՐԳ

ՍՊԱՆԻԱՏ ՌՈՒՄԲԻ ՊԱՑԹՈՒՄԻՑ 1910 Թ. ՄԱՐՏԻ 25-ԻՆ

Մերթ Բագուում ու Երևանում, մերթ Շուշում ու Գորիսի շրջակայքում (Զանգեզուր)։ Կարող և համարձակ մարտիկներ լինելուց զատ՝ նշանաւոր են և որպէս ա հ ա բ ե կ ի չ ն ե ր։ Արտէմը—մանաւանդ։

1907-ին, ուրիշների հետ միասին ենթարկուելով „հակադաշնակցական“ հովերին՝ ժամանակաւորապէս ձուլուեցին „երիտ. դաշ.“-ների հետ, միաժամանակ յարաբերութիւն ունենալով կուսակցութեան մի շարք, իրենց համար յարգելի անհատների հետ։ Վիեննայի Ընդհ. Ժողովից յետոյ „վերադարձողների“ մէջ էին և այդ երկու մաքուր ու կարող ռազմիկներն, որոնց յեղափոխական տեմպերամենտին բնաւ գոհացում չէր տալիս իրենց գրկած „նոր դրօշը“։ Այդպէս էր բացատրում ինքը Արտէմը։

„Մ ե ն ք յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն ն ե ր ե ն ք, ա յ դ դ պ ր ո ց ո ւ մ դ ա ս տ ի ա ր ա կ ւ ա ծ, գ ո ր ծ ի մ ա ր դ ե ն ք, ո չ խ օ ս ք ի“։

1908-ի սեպտեմբերին էր, երբ պատրաստւում էին Պարսկաստան անցնել։ Խիստ ոգևորւած էին և սահմանն անցնելու օրեր էին համրում։ Դժգոհ էին Երևանում երկար մնալու համար։

„Թաւրիզը ճգնաժամի մէջ է և եթէ գնում ենք օգնութեան, պէտք է շտապել այլապէս դատապարտելի է մեր ընթացքը“, բացականչում էր Արտէմը, Նիկոլի և Մարտիրոսի հետ միասին։

Հոկտեմբերին Թաւրիզ են։ Կռիւները դադարել են։ Միապետականները հեռացել են Թաւրիզի շրջակայքից։ Ընդհանուրի մասնակցութեամբ ապագայ գործունէութեան ծրագիր էր մշակւում։ Մինչ այդ՝ մի տասնեակ մարտիկներ, Արտէմի և Նիկոլի մասնակցութեամբ, անցան (հոկտեմբերի վերջին) Մ ո ւ ժ ա մ բ ա ր հայկական գիւղը, շրջակայքի դիրքերին ծանօթանալու նպատակով։ Երեկոյեան հասնելով գիւղը, հետևեալ օրը՝ առաւօտեան, երբ պատրաստւում են գիւղից դուրս գալ, նկատում են Ա լ ի-խ ա ն ի բանակը, մօտ 1500 հոգի, որն արդէն շրջապատած է լինում գիւղը։ Սկսւում է մի անհաւասար կռիւ։ Բաժանւելով մի քանի խմբակների, մարտիկները կռւում են ամբողջ 10 ժամ, մինչ ջարդւած թշնամին մօտ 150 սպանւած ու վիրաւոր թողնելով, նահանջել է սկսում, գուշակելով կռւողների հայ ֆէդայի լինելը և դատապարտելով իր անմիտ ընթացքը։ „Ն մ ա ն հ ա ր ւ ա ծ ե ս չ է մ կ ր ե լ ի մ կ ե ա ն ք ո ւ մ — ասել է Ալի-խանը, իր մտերիմ խաներից մէկին—մանաւանդ որ ը ն դ ա մ ե ն ը 10 հ ո գ ի է ի ն“։

Այդ կռւում են ընկած երկուսն էլ, միևնոյն դիրքում և այն վայրկեանին, երբ ոտքի են կանգնում մնացած ընկերների վիճակը հասկանալու։ Մահը վայրկենական է լինում. երկուսի վերքն էլ գլխից էր։ Թաղւած են Լիլաւայի դպրոցի բակում, ուր նրանց շիրիմները յաճախում են հարիւրաւոր օտար մայրեր և ողբում կորուստը „թարմ ծաղիկների“։

Մ ե ր ա ն դ ր ա ն ի կ զ ո հ ե ր ն ե ն՝ Պարսկաստանի ազատագրական շարժման ընթացքում։

(Ընդհարման մանրամասնութիւնները տես „Դրօշակ“-ի № 5—6)։

Մ Ի Ս Ա Կ

Տաճկահայ երիտասարդ, մօտ 28—29 տարեկան։ Ցանդուգն կռւող՝ բառի ընդարձակ իմաստով։ Մասնակցել է Անդրանիկի բոլոր կռիւներին և մասնաւորապէս Սասունի վերջին դէպքերին, միշտ էլ լինելով Անդրանիկի տասնեակում։ Մասնակցել է կովկասեան կռիւներին և ամեն տեղ լինելով աւանգարդի մէջ ու միշտ մնալով անվնաս, այն համոզումն էր դուրս բերել, թէ „գնդակը մահացու չէ իրեն համար“։

„Ի մ ճ ա կ ա տ ա գ ի ր ը ա յ լ է, ի ն ձ է ի դ ա ւ ա ճ ա ն ւ ա ծ, ե ս հ ա ւ ա տ ա ւ մ ե մ ն ր ա ն“... Ընդհանուր առմամբ մի եզակի դէմք էր, թէ բնաւո-



Մ Ի Ս Ա Կ

ՆԱՀԱՏԱԿԻԱԾ 1909 Թ. ՄԱՐՏ ԱՄՍԻՆ ԹԱՒՐԻԶՈՒՄ

րութեամբ, թէ համոզումով և թէ ժեստերով։ Վերին աստիճանի համեստ ու լուիկ՝ սովորական կեանքում, յանդուգն ու յամառ՝ կռիւների մէջ։ Ամիսներ շարունակ ապրել էր Թաւրիզում, բայց շատ քչերն էին ճանաչում նրան, շնորհիւ իր համեստութեան, իր լուռ ու մունջ բնաւորութեան։

Թաւրիզը վճռողական օրեր էր ապրում։ Շրջապատւած թշնամիներով, 300,000 բնակիչ ունեցող քաղաքը 5—6 ամիս շարունակ չէր ստանում կենսական մթերք։ Ազգաբնակութեան զգալի տոկոսը առոյտով էր կերակրւում։ Պարսիկների ընդդիմադիր կորովը օրէցօր իջնում էր։ Կատարեալ լքումն էր սահմանադրական բանակում և ինքնաբերաբար, այդ կացութեան վերջ տալու բարոյական ծանրութիւնը ընկնում էր սակաւաթիւ հայ մարտիկների վրայ։ Որոշւած էր յարձակւել Էյնը-Դօվլէի բանակի վրայ, որը գրաւել էր բոլոր լեռնային դիրքերը և ունէր լաւ կազմակերպւած պարսիկ կազակներ ու Շնէյդեր թնդանօթներ (որոնցով յետոյ կռւեց Եփրեմը)։

Կռիւը տևեց ամբողջ օր, մարտ, 1909 թ. Խիաւան թաղում. և համարեա ապարդիւն։ Երբ կռւի վայրն են ժամանում հայ մարտիկները, ընդհարումը աւելի բուռն ու կատաղի բնոյթ է ստանում։ Սակայն թշնամու դիրքերը այնքան ամուր ու անմատչելի են, որ յարձակումն իսկ ապարդիւն է նկատւում։

Ահա այդ իսկ վայրկեանին, բացառութիւն է կազմում Միսակը „փոքրիկ Սէրեօժի“ հետ միասին և հակառակ խմբապետի ցանկութեան դուրս ցատկելով իր դիրքից, իջնում է ձորը և ապա զառնիվեր բարձրանում դէպի հակառակորդի դիրքը՝ գնդակների տարափի տակ և 5 քայլի վրայ սկսում կռիւը — մաուզերով։ Թշնամին սարսափած այս յանդգնութիւնից թողնում է դիրքը և երբ Միսակը փորձում է դիրքը մտնել, դարանամուտ հակառակորդը խփում է հէնց բերնից, թողնելով տեղն ու տեղը և ինքը փախուստի դիմում։

Ծանր էր այդ տպաւորութիւնը՝ բոլորի համար անխտիր։

ԳԷՈՐԳ

Տաճկահայ, սեբաստացի, մօտ 27 տարեկան։ Միշտ ուրախ, զւարթ, ժպիտն երեսին։ Համեստ և վերին աստիճանի ընկերասէր։ Մարտիկ-հրացանաձիգ լինելուց բացի, նաև մարտիկ-ռմբաձիգ էր։ Այդ պարտականութիւնը կատարել է աւելի քան բարեխղճօրէն՝ կովկասեան ընդհարումների ժամանակ — Շուշում, Գանձակում և այլուր։ Կատարելագործելու համար իր մասնագիտութիւնը 1907-ին ուղարկւում է Բուլղարիայի Հ. Յ. Դ. Զ. վարժ.-ը, որտեղ էլ նա մնացել է որպէս օրինակելի մարտիկ, միշտ հնազանդ կազմակերպութեան դիսցիպլինին։

Վերադառնալով Կովկաս, միշտ զբաղւած է եղել ռումբերի և „բակէտների“ վարժութիւններով։ Քիչ յետոյ նա Խոյում, Սալմաստում, Ուրմիայումն է, որտեղ յաճախ մասնակցել է քրդական արշաւանքների դէմ կազմակերպւած ինքնապաշտպանութեան կռիւներում։

Պարսկական շարժումների միջոցին թաւրիզ էր և մասնակցում էր բոլոր կռիւներին։ „Ճգնաժամի“ օրերին, երբ պատրաստւում էին վերջնական ճակատամարտի համար, նա ամբողջովին զբաղւած էր ռումբեր պատրաստելով, որոնցից մէկի պայթումը՝ հէնց իր ձեռքում, վերջ տւաւ համեստ ու սիրւած մարտիկի խոստումնալից կեանքին—1910 թ. մարտի 25-ին։

ԻԶՄԻՐԼԵԱՆ

Վարժապետեան, Խրիմեան, Ալիշան, Իզմիրլեան... Վերջին մօհիկանները այն հինաւուրց ու զառամեալ դասակարգի, որի անունն է „հայկական կղեր“։ Նրանց գոյութեան և ծաւալուն ժողովրդականութեան հանգամանքը ապացուցանում է մի ուշագրաւ իրողութիւն։

Այն՝ որ հոգևորականն անհատը կարող է շատ թէ քիչ ժողովրդականանալ միայն մէկ պայմանով — աշխարհականանալով։ Դա *sine qua non* պայմանն է, որ ազդեցիկ է ոչ միայն հայկական հօրիզոններում, այլ և բովանդակ աշխարհում։ Համաշխարհային պատմութեան մէջ ժամանակ առ ժամանակ փարոսի պէս պլպլացող հոգևորական մեծ ու փոքր աստղերը՝ նոյն այդ պայմանի զօրութեամբ են իշխում ու լուսաւորում, սիրւում ու փառաբանւում։

Եթէ կուզես ժողովրդականանալ — աշխարհականացի՛ր... Այդպէս է պատմութեան անագորոյն պատւիրանը։ Աշխարհական — հոգով, ոչ զգեստով, կեղևով։ Կեղևը կարող է մնալ, կարող են մնալ նաև դոգմի հրահանգած բոլոր սին ձևականութիւնները, բոլոր անօգուտ կեղծիքները։

Բայց հոգին կերպարանափոխւում է, աշխարհականանում։ Հոգին, ուրիշ խօսքով, փոթորկւում է կեանքի վիթխարի տարկանոնութիւններով, ըմբոստանում է, յեղափոխականանում։ Եւ այդ է էականը։ Եթէ ուժեղ է „աշխարհականացող“ վեղար աւորը, եթէ նա ձիրքոտ է և կամքոտ՝ ապա կը հարթէ անպայման իր ճանապարհը, կըստեղծէ դրական, հասարակօգուտ իր „կարիերը“, կը դառնայ ժողովրդական։

Մենք, հայ յեղափոխականներս, սոցիալիստներս, կարող ենք միայն ծափահարել այդ հազւագիւտ մետամորֆոզներին, այդ ուշագրաւ փոխակերպումներին... առանց երկիւղ կրելու՝ թէ այդ հանգամանքից կարող է ուժ ու թարմութիւն ստանալ կղերականութեան հին ու խարխուլ մեքենան։ Չը մոռանանք, որ կրելով վեղարի ու փարաջայի տակ ըմբոստ միտք ու հոգի, արշաւելով հակաժողովրդական բոլոր չար, ստրկացնող ուժերի դէմ, ազդարարելով ազատութեան յաղթանակները հրաբխային սասանեցուցիչ ժայթքումների մէջ (Ալիշան), մեր հազւագիւտ ու կորովի հոգևորականների դրանով իսկ անգիտակցաբար թօթափում են կրօնը բթացուցիչ ազդեցութիւնը, դրանով իսկ անգիտակցաբար ըմբոստանում են այն անշունչ ու քարացած դոգմի դէմ, որ դարերից ի վեր ափիոնի պէս քնացրել է, ընդարմացրել ստրուկներին, հանգցրել է ազատատենչ ոգին, տրորել է մարդկային ամեն արժանապատւութիւն, մղել է գիտակցաբար դէպի անարգ, անասնական համակերպութիւն, դէպի զուտ քրիստոնէական գեռնատարած խոնարհում...

Ոչ, „վտանգաւորը“ Խրիմեանները չեն, այլ նրանք, որոնց համար սրբազնագոյն և գերագոյն ֆէտիշը եկեղեցին է, դոգմն է, որոնք պատրաստ են այդ եկեղեցուն ու դոգմին զոհաբերել ժողովուրդը, ոտնահարել ռամկավարութեան, մտքի և հոգու ազատութեան ամենատարրական պահանջները։

Մետամորֆոզի, „աշխարհականացման“ դէպքերը գուցէ աւելի յաճախակի են հայ կղերի պատմութեան մէջ, քան թէ ուրիշ, նոյնիսկ եւրոպական ազգերի մօտ։ Եւ ի՞նչ զարմանք... Հայ ժողովուրդը, որ իր ահեղ ու տանջալի երկունքներով խորհրդանիշում է մարդկութեան ցաւոտ էւոլիւցիան, հայ ժողովուրդը, որ իր գոյութեան արշալոյսից իսկ նետւել է տիեզերական գոյամարտի ամենայորձանուտ հոսանքի մէջ, ենթարկւել է մերկ ու անզէն՝ բռնակալական բոլոր սարսափներին, ունենալով յընթացս երկար դարերի մէկ առաջնորդող ու ղեկավարող դասակարգ միայն՝ կղերը—հայ ժողովուրդը վաղուց ի վեր նպաստաւոր հող է մատակարարել այդ ղեկավարող դասակարգի

պարբերական ընդվզումների, նրա „աշխարհիկ առաքինութիւնների“ փթթման համար։ Բացառիկ ճակատագրի և խօլական տանջանքների դիմաց՝ հոգեբանօրէն անհնարին էր, որ հայ կղերը *en bloc* փակուած մնար իր կաստային կղզիացման մէջ, ճգնութեան, աղօթքի ու ապաշխարանքի իր մահաբոյր խուցերում։ Պէտք էր, որ հրապարակ գային նրա ծոցում անհատներ հասարակական նեարդերով ու բնազդներով, անհատներ՝ որ գէթ մասամբ կարողանային պատասխան տալ ցեղի տանջող և առեղծուած-հարցումներին. „դէպի ո՞ւր“... „ո՞ւր է ելքը“... Եւ դարձեալ, որքա՞ն չնչին է այդ անհատների թիւը...

Իբրև դասակարգ՝ հայ կղերը անզգայ մնաց այդ սարսափելի հարցերի դիմաց։ Բայց նրա ծոցից, *par exès du mal*, հակադրութեան օրէնքով իսկ երևան եկած անհատները խտացրին և կրեցին—մեծ կամ փոքր ծաւալով — ցեղի խուլ ու համր դժգոհութիւնը, բողոքը և երբեմնապէս դուրս ժայթքեցին վնասակար ազգայնաջինջ ուժերի դէմ՝ այդ բողոքի լաւան։

Բաւական է այդ լաւայի շորշոփը միայն վեղարաւորի մէջ, որպէս զի նա դառնայ կուռող ու տանջուող ժողովրդի սիրելին։ Բաւական է մի հատիկ ժեստ, որպէս զի նա բարձրանայ հմայքի ու ժողովրդականութեան գագաթը։ Այդ ևս հոգեբանօրէն հասկանալի է։ Որքան հազուագիւտ է առաքինութիւնը մի յայտնի դասակարգային մթնոլորտում, այնքան նա աւելի գնահատելի է։ Մի դասակարգ, որ դարերի ընթացքում տիրել է ժողովրդային գիտակցութեանը լոկ դրախտի խոստումներով և դժոխքի սպառնալիքով, չէր կարող բնականաբար սէր ու պատկառանք ներշնչել այդ ժողովրդին։ Հապա, երբ նոյն այդ դասակարգից մերթ ընդ մերթ ծնւում են բացառիկ անհատներ, որ արհամարհելով դասակարգային խորարմատ աւանդութիւններն ու նախապաշարումները, նետւում են—թէկուզ և ժամանակաւորապէս, վայրկենաբար—բողոքի փշոտ ճանապարհը, շատ թէ քիչ ձուլւում ըմբոստացող ժողովրդի հետ... որքա՞ն դարձեալ բնական է այդ ժողովրդի խանդավառութիւնն ու պաշտամունքի զգացումը հանդէպ այդպիսի „անսովոր“ երևոյթների, ի տես այդպիսի խիզախ թռիչքների... Մի քահանայ, որ խաչը ձեռին առաջնորդում է կուռողներին դէպի Խանասորի ռազմադաշտը՝ պատժելու համար բարբարոս աշիրէթին, մի պատրիարք, որ ճգնաժամի ու զուլումի վայրկեանին կարողանում է կանգնել իր մարդկային կոչման բարձրութեան վրայ և ձուլւելով յեղափոխական բանակի հետ, նետել իր ձեռնոցը դժնդակ բռնաւորին. մի կաթողիկոս, որ խիզախում է ըմբոստացող ժողովրդի գլուխ կանգնել և ծառանալ ցարական բռնապետութեան դէմ, մի նոյնքան ծանր ու պատասխանատու վայրկեանում.. Դրանք են ահա այդ անսովոր երևոյթները—անսովոր, եթէ կուզէք նոյնիսկ հերոսական՝ մի միջավայրում, մի խաւար դասակարգային մթնոլորտում, ուր այնքան դարերից իվեր մշակուել է ամենայն խնամքով նիչչէական *Sklaven-moral*-ը, „ստրկի հոգեբանութիւնն“ ու մտայնութիւնը, ուր ձգտել են իսպառ մարել բողոքի ու հերոսութեան բոլոր կայծերը և ուսկից ժողովուրդը լսել է միայն հնազանդութեան ու լռիկ, գրաստային համակերպութեան քարոզներ...

Սակաւաթիւ օվազիսներ — մի վշտոտ, անծայրածիր անապատում... Հէնց դրա համար էլ նրանք սիրելի են, նուիրական են։ Թո՛ղ օվազիսը լինի թէկուզ մի հատիկ ծառ կամ մի ցանցառ թփախումբ... Բաւական է, որ նա հնարաւորութիւն է տալիս արևակէզ, բազմատանջ օրգանիզմին՝ փոքր ինչ շունչ ու հանգիստ առնելու, փոքր ինչ զովացնելու իր հոգին։ Թո՛ղ Իզմիրլեանը չունէր նոյնիսկ $^1/_{10}$-ը մասնիկը այն սրբազան կրակի, որ լափում, բոցավառում է հայ ազատութեան ռազմիկներին. թո՛ղ նա չունէր կէսի կէսը մի Սերոբի, մի Վազգէնի անձնուրացութեան ու անվեհերութեան։ Բայց նա իր պատմական ժեստով դարձեալ „անսովոր“ մի մարդ է թշուառ ու լքեալ ժողովրդի համար, քանի որ իջնում է այն խաւարակուռ, մինչև ուղ ու ծուռ ստրկամտութեան ախտով վարակուած տիեզերական դասակարգից։

Վարժապետեան, Խրիմեան, Իզմիրլեան.. Շարունակութիւնը կը գա՞յ արդեօք... Թւում է թէ ոչ։ Եւ պէտք էլ չը կայ։ Աշխարհիկ ուժերը փթթում են արդէն հալածական ժողովրդի մէջ և հետզհետէ տիրանում են հրապարակին, հետզհետէ իրենց ձեռքն են առնում ազգային ճակատագրի ղեկավարութիւնը։ Ցամենայն դէպս, այդ մարդիկ կատարել են մի նուիրական դեր և յաւերժացել են պատմութեան մէջ։ Նրանք կենդանի ըմբոստացողներ են թէ երկրաւոր և թէ երկնային ուժերի դէմ, թէ աշխարհիկ բռնապետութեան և թէ մահաշունչ դոգմի ու կաստային-կղերական միջավայրի դէմ։ Եւ իբրև այդպիսիք՝ նրանք կունենան միշտ մի լաւ յիշատակ, մի պայծառ անկիւն հայ մարտնչող երիտասարդութեան սրտերում։

ԴԷԿԱՆՕԶԷ

Վրացական սոցիալիզմի առաջապահիկ դէմքերից մինն է, որ գերեզման է իջնում վաղաժամ, 40-ամեայ հասակում։

Դէկանօզէշվիլին, կամ — ինչպէս անւանում էինք յեղափոխականների մտերմական շրջանում — Դէկանօզէն մեռաւ նորերս Թոքախտից Ֆրանսիայի Կանն քաղաքում, 10—15 տարուայ տանջանքներից ու զրկանքներից յետոյ։ Այդ հեզ, լռիկ և ինտելիգենտ գործիչի մահը անկեղծ ցաւ կը պատճառէ իր բոլոր համախոհներին ու ծանօթներին։ Ութ տարի սրանից առաջ, նա իր մի ուրիշ ընկերոջ հետ հաստատուեց Պարիզում և հրատարակել սկսեց „Վրաստան“ անունով թերթը, ֆրանսերէն և վրացերէն լեզուներով։ Նպատակն էր՝ մի կողմից ծանօթացնել եւրոպացիներին իր մոռացուած հայրենիքի հետ, միւս կողմից՝ արծարծել ազատ Պարիզից սոցիալիզմի ու ավտոնոմիզմի գաղափարը իր կովկասեան հայրենակիցների մէջ։ Վրացական ֆեդէրալիստ կուսակցութեան պարագլուխներից մէկն էր և մեծ եռանդով պաշտպանում էր մասնաւորապէս ազգերի ինքնօրինութեան կամ *autonomiay*ի թէօրիան։ Այդ վերջինի լուսաբանութեան էր նուիրուած *La Georgie*-ի և „Սաքարտվէլո“-ի յօդուածների մեծագոյն մասը։ Այդ նոյն գաղափարն էր պաշտպանում նա 1904-ի առաջին համառուսական միջկուսակցային խորհրդաժողովում, համերաշխ „Դաշնակցութեան“, ԼԵՀ Սոց. Կուսակցութեան և Ֆինլանդական հատուածի ներկայացուցիչների հետ։

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՒ ՏԵՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐ *)

(Մեր աշխարհահայեացքի հիմքերը)

III

Երկու մեծ, հակամարտ հոսանքներ մրցում են կատաղօրէն մեր այժմեան քաղաքակրթութեան ծոցում։ Եւ երկուսի պայքարը կազմում է արևմտեան նորագոյն պատմութեան գրեթէ ամբողջ պարունակութիւնը։

Մէկը կոչւում է—ընդհանուր որակումով — կ օ ն ս ե ր վ ա տ ի զ մ, պահպանողականութիւն. նա ձգտում է պ ա հ պ ա ն ե լ արդի հասարակական կարգերը, նրանց էական խարիսխներով—մասնաւոր, կապիտալիստական սեփականութիւն, դրամագլխի շահագործում, վարձու աշխատանքի սիստեմ, տէրերի ու ծառաների յարաբերութիւն, ժողովրդային զանգուածների տնտեսական հպատակութիւն և դրա հետ անխուսափելիօրէն, ճակատագրօրէն շաղկապած՝ թշուառութիւն, զրկանքներ ու տառապանքներ...

Միւս, հակամարտ հոսանքը կոչւում է—նոյն ընդհանուր տիեզերական որակումով — Ս օ ց ի ա լ ի զ մ, ընկերավարութիւն։ Նա էապէս յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն մի հոսանք է և ձգտում է վերացնել, հիմնայատակ կործանել հասարակական այն բոլոր խարիսխները, որոնք մշանջենաւոր աղբիւր են այդ զանգուածային ստրկութեան ու թշուառութեան։

Երկու հոսանքներն էլ ունին ի դ է ա լ։ Բայց մէկի իդէալը ներկայի ու անցեալի մէջ է, միւսինը՝ ապագայում։ Մէկի իդէալը՝ մէկ կամ մի քանի առանձնաշնորհեալ դասակարգերի ե ր ջ ա ն կ ո ւ թ ի ւ ն ն է, միւսինը՝ ա մ բ ո ղ ջ մ ա ր դ կ ո ւ թ ե ա ն բարօրութիւնն ու երջանկութիւնը։ Մէկը ներկայացուցիչ է մարդկանց ա ն հ ա ւ ա ս ա ր ո ւ թ ե ա ն դաւանանքի, միւսը — տիեզերական հաւասարութեան։ Մէկ հոսանքը—ընկերավարութիւնը—ինքը իդէալն է, բառի պայծառ ու վեհագոյն իմաստով, միւսը՝ այդ իդէալի բացասումն է։

Երկու հոսանքներն էլ ունին իրենց հաւատարիմ կ ր ո ղ ն ե ր ը, իրենց ժրիչ գործօնները։ Սօցիալիզմը յենւում է միլիօնաւոր աշխատաւորների վրայ, որոնց տառապանքը իր գոյութեան նախապատճառն է, յենւում է և հազարաւոր անձնուէր, գաղափարական բարոզիչների վրայ, որոնք վառուած իդէալի անշէջ կրակով, տոգորուած նրա վերջնական յաղթանակի անսասան գիտակցութեամբ, գործում են բոլոր երկրներում այդ իդէալի ուղղութեամբ, դիմագրաւում են ամեն տեսակ խոչընդոտների ու զրկանքների, յաճախ նոյն իսկ գըրկում են մարտիրոսութեան ծանր խաչը, որպէս զի առաջնորդեն աշխատաւոր ու տառապող մարդկութիւնը դէպի գալոց Հաւասարութիւն։ Սօցիալիզմի արծարծման և տարածման միջոցներն են՝ գրքեր ու բրոշիւրներ, թերթեր ու հանդէսներ, ապա և բանաւոր պրոպագանդ՝ ընտանիքների մտերմական մթնոլորտում, գործարաններում, հրապարակային ժողովներում, միտինգներում, պարլամենտներում...

Մի՞ւս հոսանքը... Նա էլ յենւում է փողի, պետութեան, օրէնքի, ոստիկանութեան, եկեղեցու, զօրքի, թնդանօթի և բոլոր միւս „հեղինակութիւնների“ վրայ, որոնց կոչումն է՝ պահպանել առանձնաշնորհեալ դասակարգերի գոյութիւնը, յարատևել անհաւասարութեան ու անարդարութեան ռէժիմը։ Բայց նա յենւում է... տարաբախտաբար, նաև մասսաների, ժողովրդական զանգուածների տ գ ի տ ո ւ թ ե ա ն վրայ, այն բուռ, սնահաւատ, նախապաշարուած տգիտութեան՝ որ միշտ մի տեսակ կրօնական երկիւղածութեամբ է վերաբերում իրեն ճնշող ու մտրակող այդ հինաւուրց ու բռնաւոր հեղինակութիւններին, անգամ փողին, Հարստութեան...

Եւ յենւելով այդ բոլոր հեղինակութիւնների վրայ, ունենալով իրենց ձեռքում իշխանութիւն՝ պահպանողական—կամ ընթացիկ բառբառով բուրժուազական—հոսանքը իր տարածման ու բարգաւաճման համար կիրառում է անհամեմատ աւելի լայն ծաւալով վերը յիշած պ ր օ պ ա գ ա ն դ ի միջոցները. մամուլ, գրականութիւն, հանդէսներ, ժողովներ... Նրա բերանօրգանները անհամեմատ աւելի մեծ են, աւելի շատ ու տարածուած՝ նրա մամուլը դեռ այսօր էլ տիրում է հրապարակին — անգամ արևմտեան ամենառամկավար երկրներում — և նա յաճախ դուրս է մղում մրցակցութեան չը դիմացող սօցիալիստական, ժողովրդական օրգանները, թագաւորում է միահեծան, պղտորում է, թունաւորում, ապականում ընդհանրութեան մտքերը։ Պահպանողական հոսանքն ունի, վերջապէս—իր գոյութիւնը ամրապնդելու և ընտրողական ու այլ վայրկեաններում յաղթանակելու համար—մի գերագոյն միջոց, որ բղխում է փողի ամենազօր, ապականող յատկութիւնից—կ ա շ ա ռ ք ը...

Փորձենք հասկանալ երկու հոսանքների հոգեբանութիւնն ու էութիւնը, գծագրենք նրանց ընդհանուր պատկերը։

Պ ա հ պ ա ն ո ղ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը չի կազմում ջինջ ու միապաղաղ մի հոսանք։ Դա մի ահագին, խայտաբղէտ բանակ է։ Այդտեղ կան տարբեր, ամբողջ դասակարգեր ու կուսակցութիւններ, որոնք վաղուց ի վեր կեանքի ու մահուան կռիւ են յայտարարած իրարու դէմ։ Այդտեղ կան արքայականներ, աւատականներ, կայ կղեր, մեծ ու մանր բուրժուաներ կամ արդիւնաբերողներ, կայ և վաճառականութեան, գիւղացիութեան, արհեստաւորութեան ու նոյնիսկ բանւորութեան մի մասը (ընթացիկ բառբառով „անգիտակից“ մասը)։ Կ ո ւ ս ա կ ց ա կ ա ն լեզուով կան այդտեղ յեսուիտներ, իսկական պահպանողականներ, ապա և առաջադիմականներ, արմատականներ ու սօցիալիստարմատականներ։ Ահագին տարածութիւն կայ Գրանսիայի միապետական և բադիկալ (արմատական) կուսակցութեան միջև, շատ հարցերի մէջ նրանք անհաշտ ու կատաղի թշնամիներ են. սակայն երկու բևեռները միանում են նոյն ընդհանուր ու հիմնական աշխարհայեացքի հողի վրայ, երկուսն էլ կողմնակից են կապիտալիստական մասնաւոր սեփականութեան և դասա-

*) Տես „Դրօշակ“ № № 3—4, 5—6։

կարգային առանձնաշնորհումի ու անհաւասարութեան։ Բաղդիկալներ ու առաջադիմականներ նրանով են տարբերւում աջակողմեան, միապետական թեւերից, որ ձգտում են շատ թէ քիչ „արմատական“ ռէֆորմներ, բարենորոգումներ մտցնել ժամանակակից կեանքի մէջ, „ըստ կարելւոյն“ հարթել դասակարգային անհաւասարութեան անդունդը, ըստ կարելւոյն ամոքել ժողովրդային զանգւածների թշւառութիւնը... և այդպիսով ապահովել ու յաւիտենականացնել բուրժուազիայի, տիրող խոշոր դասակարգի, գոյութիւնն ու իշխանութիւնը։

Այդ գոյութիւնը յաւերժացնելու նպատակով իսկ՝ պահպանողականութեան ծոցում վաղուց ի վեր առաջ են գալիս և այսպէս կոչւած „*socialisant*“ հոսանքներ, „սոցիալիստացնող“ ու հաւասարացնող կուսակցութիւններ, որոնք նեիրւում են, գէթ առերեւոյթս, աշխատաւոր ժողովրդի շահերին և կատաղօրէն մրցում են բուն սոցիալիստ հատւածների հետ, ցոյց տալով իրենց աւելի ջերմ պաշտպան ու նախանձախնդիր աշխատաւորութեան շահերի։ Նման հոսանքներ երևան են գալիս մասնաւորապէս կղերի մէջ։ Նրանք սիրով որդեգրում են „սոցիալիզմ“ անունը... Եւ ահա այսօր գոյութիւն ունի արևմտեան երկրներում „Քրիստոնէական սոցիալիզմը“—բաւականաչափ ստւար մի բանակ, մասնաւորապէս Գերմանիայում, (*Zentrum*), Աւստրիայում (*Christlich Sozial*), Բելգիայում և Իտալիայում „Քրիստոնէական“ բառն էլ կարատւում, մասնաւորւում է. կան կաթոլիկ-սոցիալիստներ, բողոքական-սոցիալիստներ և այլն։ Ժամանակին երևան կը գայ, հաւանօրէն, և հայ-լուսաւորչական սոցիալիզմ։ Բոլորն էլ, հարկաւ, երդւում են Քրիստոսի ու հաւասարութեան անունով։ Եէ՞, աւետարանը ահարկու շանթեր ունի փողի, հարստութեան դէմ։ Եէ՞, առաջին քրիստոնեայ համայնքները սոցիալիստ էին, „կոմմունիստ“, չէին ճանաչում „իմի“ ու „քոնի“ խտրութիւնը, չէին ընդունում սեփականութիւն ..

Բայց այդ սիրուն բառերն ու նշանաբանները — հաւասարութեան, եղբայրութեան—լոկ պսպղուն դիմակներ են։ Իրօք այդ ամբողջ կղերական սոցիալիզմը ստեղծւած է՝ հակակշիռ լինելու ճշմարիտ սոցիալիզմին, հրապուրելու աշխատաւոր ժողովրդին, մանաւանդ դաշտային կրօնամոլ, նախապաշարւած ազգաբնակութիւնը, թոյլ չը տալու, որ նա ընկնի հակակղերական ու հակաբուրժուական, „կործանարար“ վարդապետութեան գիրկը։ Իրօք այդ բոլոր քրիստոնեայ-սոցիալիստները ջերմեռանդ երկրպագուներ են ամեն տեսակ երկրաւոր կուռքերի և ձգտում են արմատացնել ժողովրդային ընդհանրութեան մէջ այն չարաշուք համոզումը, որ ժողովուրդը պէտք է յաւէտ դեգերէ չքաւորութեան ու սարկութեան մէջ, որ նա պէտք է հպատակի մեծերին, հզօրներին, որ դա ֆատալ, ճակատագրական, աստւածային մի պատգամ է, որ այս կեանքը փխրուն է, անարժէք, վաղանցուկ և որ ճշմարիտ բարօրութիւնն ու երջանկութիւնը երկնքում է...

„Սոցիալիստական“ հոսանքներ առաջ են գալիս նաև աշխարհիկ պահպանողականութեան ծոցում։ Կան „պետական սոցիալիստներ“ (*Staatssozialist*), „ամբիոնաւոր սոցիալիստներ“ (*Katheder-Sozialist*). կան և „բաղդիկալ-սոցիալիստներ“։ Դրանք ևս ծնունդ են նոյն հրամայական, „պահպանողական“ պահանջի — թումբ դնել սոցիալիզմի յարձակման, տիեզերական յորձանքի առջև, սիրաշահել և գրաւել „ստորին դասակարգերը“, պետական բարեկարգութեամբ, աշխատաւորական օրէնսդրութեամբ, ռէֆորմներով։

Եւ այդպիսով դուրս է գալիս, որ գրեթէ ամբողջ քաղաքակրթւած աշխարհը—սոցիալիստ է... Ինչպէս որ բոլոր կուսակցութիւնները—սկսած ծայրայեղ միապետականներից մինչև կղերը — խօսել են միշտ „ժողովրդի“ անունից, ցոյց են տւել իրենք զիրենք միշտ նեիրւած այդ ժողովրդի շահերին, — նոյնպէս և նրանք բերան են առել սոցիալիզմ բառը և չեն ուզում թոյլ տալ, որ նա դառնայ որևէ կուսակցութեան սեփականութիւն։ Երբ սրանից մի 20 տարի առաջ սոցիալիստները առաջին անգամ մուտք գործեցին իտալական պարլամենտի մէջ և սկսեցին խօսել իբրև ուրոյն կուսակցութիւն, սոցիալիստ անւան տակ,— մի ուշագրաւ և զարմալի թիւրիմացութեամբ բուրժուա կուսակցութիւնները եռանդով ընդհատում էին նրանց և հասկացնում, որ նրանք իրաւունք չունին այդ անունը մենաշնորհ դարձնել։ Սոցիալիստ հռետորը սկսում էր.

— *Noi socialisti*... Մենք սոցիալիստներս..

Պահպանողականները ճչում էին.

— *Noi siamo tutti socialisti!*

Մենք ամե՜նքս սոցիալիստներ ենք...

Եւ ստեղծւեց գերմանական բառբառի մէջ մի յատուկ արտայայտութիւն՝ „*Auch-Sozialist*“, „նմանապէս-սոցիալիստ“՝ բնորոշելու համար այդ անհաշիւ կեղծ-սոցիալիստներին։

Կեղծիքը չէր կարող յաւիտենօրէն կանգուն մնալ։ Կամաց-կամաց, սոցիալիզմի անդուլ ու համատարած պրոպագանդի շնորհիւ, աշխատաւորական զանգւածները սթափւեցին բոլոր երկրներում, ճանաչեցին իրենց իսկական բարեկամներին ու թշնամիներին... Աստւածոյ, Յիսուսի, թագաւորի հեղինակութիւններն էլ չ՚օգնեցին տիրող դասակարգերի իդէալներին։ Պէտք էր դիմել ուրիշ, աւելի համոզիչ, հեղինակութեան։

Ամենահամոզիչ հեղինակութիւնը— գիտութիւնն է։

Եւ նրանք դիմեցին գիտութեան։ Բոլոր նրանք, որոնց հաճելի էր ամեն գնով արդարացնել ժամանակակից աշխարհի աղաղակող տարկանոնութիւնները, ոճիրները, արհաւիրքները, բոլոր նրանք, որոնց թանկ ու նեիրական էին դասակարգային, կաստային առանձնաշնորհումները և նրանց հետ շաղկապւած հասարակական հաստատութիւնները—սեփականութիւն, շահագործում, զանգւածների տնտեսական հպատակութիւն, միլիտարիզմ, պատերազմներ ու պարբերական յոշոտումներ — բոլոր նրանք ապաւինեցին գիտութեան բարձր, անմեղանչական հեղինակութեան և դատաւոր կոչեցին նրան աշխարհի ամենամեծ, ամենակնճռոտ վէճի առթիւ, որ մղւում է կոնսերվատիզմի և սոցիալիզմի, պահպանողականութեան ու ընկերավարութեան միջև...

Գիտութիւնը դեմ օկրա՞տ է, թէ արիստոկրատ. ռամկավարակա՞ն, թէ ազնւական։

Գիտութիւնը կողմնակի՞ց է, թէ հակառակ մարդկանց հաւասարութեան *)։ Պաշտպանո՞ւմ է նա, թէ

*) „Հաւասարութիւն“ բացարձակ իմաստով—այսինքն, նաեւ մտաւոր, հոգեկան աշխարհում—երբէք, ի հարկէ, չի իրագործւի։ Մարդ-

ժխտում առանձնաշնորհումը, դասակարգերի խտրութիւնը, կաստային տիրապետութիւնը։

— Պաշտպանում է... ասացին, բնականաբար, դասակարգային իրաւունքների ջատագովները։ Դրանց մէջ—բազմաթիւ բնագէտներ, կենդանաբաններ, կենսաբաններ, մարդաբաններ։ Բազմաթիւ նաև — հասարակագէտներ, սոցիոլոգներ։ Նրանք կոչ են անում բնագիտութեան օրէնքներին։ Նրանք յենւում են դարվինիզմի վրայ։

Ի՞նչ է ասել Դարվին։

Նա հաստատել է, որ գոյութեան յաւիտենական պայքարի մէջ, բնական ընտրութեան ճանապարհով (*natural selection*) ստեղծագործել է կենդանական ու բուսական տեսակների այժմեան վիթխարի այլազանութիւնը, որ բարձր, կատարելագործուած կենդանական մարմինները—և ամենից բարձրը՝ ինքը մարդը—առաջ են եկել սկզբնական մի քանի պարզ, անկատար, միապաղաղ օրգանիզմներից, մարմիններից, առաջ են եկել դանդաղ, աննշմարելի, աստիճանական փոփոխումներով, էւոլիւցիայով, կատարելագործել է հետզհետէ նոյն գոյութեան կռիւի մէջ (*Struggle for life*), նոյն բնական ընտրութեան շնորհիւ... Յաւիտենական և անողորմ կռիւ է մղւում ամբողջ կենդանի աշխարհում՝ սնունդի, լոյսի ու այլ անհրաժեշտ պիտոյքների պակասութեան պատճառով և այդ կռիւի մէջ մի կոյր, անգիտակից ուժ — բնութիւնը — կատարում է ընտրութիւն մարմինների ու տեսակների միջև, նա ընտրում, ապրեցնում է համեմատաբար փոքր թւով էակներ, միմիայն նրանց, որոնք գիտեն յարմարւել շրջապատող միջավայրի պայմաններին. նա միւս կողմից անխնայ ոչնչացնում է թոյլերին, տկարներին, բոլոր նրանց, որոնք չեն զինուած բաւականաչափ այդ կռիւի համար, որոնք չեն կարող յարմարւել իրենց շրջապատին։

Ապրում, բազմանում, յարատևում են, ուրեմն, համեմատաբար փոքրաթիւ ընտրեալները, ստանալով մի տեսակ արտօնեալ դիրք, զարգացնելով իրենց կարող, „յարմարող“ գծերը, առանձնայատկութիւնները և ժառանգելով նոյն գծերը իրենց յետագայ սերունդներին։

Այդպէս է օրէնքը կենդանական աշխարհում։

Եւ ահա դարվինական բնագէտներն ու սոցիոլոգները փորձեցին փոխադրել նոյն օրէնքը մարդկային էւոլիւցիայի մէջ։ Յայտարարեցին, որ նոյն „կռիւն“ ու „ընտրութիւնը“, նոյն ընդհանուր, տիեզերական օրէնքի ուժով, կատարւում է և պէտք է անպայմանկատարւի նաև մարդկային հասարակութիւնների մէջ, որ պէտք է ոչնչանան, անդունդ գլորւին թոյլերը, անկարները, „յարմարելու“ անընդունակները և պէտք է յաղթանակեն միմիայն ուժեղները, „արտօնեալները“, յարմարելու ընդունակները։ Այդ յաւիտենական պատերազմն ու ընտրութիւնը, ասացին նրանք, միակ խթանն ու գրաւականն են պրոգրէսի, առաջադիմութեան...

1877 թւին գերմանական Միւնխեն քաղաքում գումարուած բնագէտների մի ուշագրաւ բանակռւի մէջ Էրնստ Հեկկել, հռչակաւոր դարվինական-բնագէտը, յայտարարում էր.

„Դարվինեան թէօրիայի համեմատ՝ մարդկանց հաւասարութիւնը անհնարին է, ցնորական, նա միանգամայն հակասում է այն անհրաժեշտ անհաւասարութեանը, որ գոյութիւն ունի ամեն տեղ... Ինչպէս անասնական, այնպէս և մարդկային հասարակութեան մէջ երբէք չեն կարող հաւասար լինել ոչ իրաւունքներն ու պարտաւորութիւնները, ոչ էլ բարիքներն ու վայելքները... „Ընտրութեան“ թէօրիան ուսուցանում է, որ մարդկութեան կեանքում ևս, ինչպէս բոյսերի ու կենդանիների մէջ, միշտ և ամեն տեղ սոսկ մի ինչին, առանձնաշնորհեալ փոքրամասնութիւն է, որ կարողանում է ապրել, զարգանալ, մինչ ահագին մեծամասնութիւնը ընկճւում է և կորսւում շատ թէ քիչ վաղաժամ... Դաժան, անողորմ „գոյամարտը“, որ աւերածներ է անում ամեն տեղ շնչաւոր բնութեան մէջ, ապրող էակների այդ յաւիտենական ու անողորմ մրցութիւնը անժխտելի մի իրողութիւն է. մի փոքրիկ թիւ միայն—ամենից ուժեղները կամ ամենից ընդունակները, յարմարողները—աջողում է յաղթականօրէն տանել մրցումը“...

Ահա այսպիսի դաժան, յոռետես եզրակացութիւններ են հանում մի կարգ դարվինիստ-գիտնականներ հասարակութիւնների զարգացման նկատմամբ։ Եւ այդ սև, ահարկու յոռետեսութիւնը նւիրագործում են գիտութեան պայծառ հեղինակութեամբ։ Նրանց համար աշխարհը—նաև մարդկային, հասարակական աշխարհը—կոչուած է յաւիտենօրէն թատր լինելու հակամարտ և մրցակից ուժերի արիւնահեղ բաղխումների։ Նրանց համար պատերազմի չարաշուք, կործանարար պատուհասը յաւիտենօրէն անհրաժեշտ է, ճակատագրական և նա գերագոյն մի բարիք է, առանց նրան՝ մահ է, անշարժութիւն, այլասերում, նրանից դուրս՝ չիք փրկութիւն...

Սպենսեր ևս—ամենամեծ դարվինական հասարակագէտը—թէև ընդունում է „մեղմացուցիչ պարագաներ“, թէև համոզուած է, որ պատերազմները միշտ աւելի և աւելի պիտի նւազին, սակաւանան, պիտի կորցնեն իրենց բիրտ ու դաժան բնաւորութիւնը, պիտի տեղի տան հետզհետէ մարդկանց համերաշխ, յօժարակամ գործակցութեան ու խաղաղ մրցումներին—Սպենսեր ևս անհաւասարութեան և գոյութեան պայքարի մոլեռանդ ջատագով է, առանձնաշնորհումների կողմնակից, դասակարգերի յարատևութեան պաշտպան։ Տնտեսական մրցումը, ինչպէս և բոլոր միւս մրցումները, անգլիացի փիլիսոփայի աչքում ֆատալ, ճակատագրական անհրաժեշտութիւն են և պէտք է թողնել, որ այդ մրցումը, — գոյութեան կռիւը — կատարւի ազատօրէն, ինչպէս ազատ բնութեան ծոցում, պէտք է թողնել, որ օբ՝եկտիվ, առարկայական ուժերը անկաշկանդ ու միահեծան կատարեն իրենց խաղը, „ընտրութիւն“ անեն մարդկանց ու ժողովուրդների միջև, անդունդ նետեն թոյլերին, յարմարելու անկարողներին և վեր բարձրացնեն ուժեղներին, յարմարողներին... *Laissez faire, laissez passer!*... Պէտք է թողնել, որ հասարակական

կանց, ինչպէս ժողովուրդների, ազգերի մէջ, լինելու են միշտ զանազանաւորումներ, մտքի, հոգու առանձնայատկութիւններ, ձիրքի, տաղանդի, հանճարի, ստեղծագործական ուժի տարբերումներ, որոնք անհրաժեշտ են տիեզերական խաղաղ մրցման եւ անհատնում պրոգրէսի, առաջխաղացութեան համար։ Խօսքը այստեղ տնտեսական, քաղաքական եւ սոցիալական հաւասարութեան մասին է, իրաւունքի եւ պարտքի, ազատութեան եւ վայելքի հաւասարութեան։

էволիւցիան ինքն իրեն առաջ մղէ „զտման“, մաքրագործման ու առաջադիմութեան աշխատանքը և չը պէտք է թոյլ տալ, որ պետութիւնը, օրէնքը, պարլամենտները, կառավարութիւնները, բարեգործական, խաղաղասիրական ու այլ տեսակ ընկերութիւնները միջամտեն մարդկանց այդ հանուր ու համատարած պայքարի մէջ, մեղմացնեն նրա սփռած աւերմունքները, ամոքեն պրոլետարիատի, խեղճերի, կամ ուրիշ խօսքով „յաղթուածների“, չը յարմարուողների թշուառութիւնն ու տանջանքները... Հեռո՛ւ պետութիւնն ու սահմանափակող օրէնքները, Ազա՜տ են մարդիկ և ազա՜տօրէն նրանք պիտի նետուին գոյութեան ահեղ ու յաւիտենական ճակատամարտի յորձանքները, ազատօրէն պիտի չափեն իրենց ուժերը ու կարողութիւնները...

Ահաւասիկ „հասարակական դարվինիզմի“ էութիւնը, նրա մօտաւոր ձևակերպումը։

Սեղմ թէ դաժան, քաղաքակիրթ թէ վայրագ՝ գոյութեան կռիւը, համաշխարհային անխուսափելի Struggle for life-ը „պէտք է թագաւորէ“, պէտք է աւերէ և յաղթէ... Դրա մէջ է իբր թէ „պրոգրէսը“, առաջադիմութիւնը։ Այդ աւերածների ու յաղթութիւնների միջից յաղթանակով պիտի դուրս գան „լաւերը“, արիստոկրատ-ազնուականները, մարմնով, մտքով և հոգով ուժեղները... Դա բնութեան նախասահմանած պողպատեայ օրէնքն է և ոչ մի ուժ չի կարող փոփոխել այն, բոլոր „դարմանները“ անօգուտ են, կռիւ և թշուառութեան դէմ ձեռնարկուած բոլոր հաւաքական միջոցները անմիտ են, վնասակար, քանի որ նրանք յաւակնութիւն ունին դէմ գնալու բնական կարգին, խախտելու նրա օրէնքները։ „Անմիտ ու վնասակար է“ և սոցիալիզմը, որ յաւակնում է վերջ տալ տնտեսական պատերազմին, թոյլերի շահագործման ու հարստահարութեան, դասակարգային արտօնութիւններին, որ յաւակնում է, մի խօսքով, վերացնել գոյութեան կռիւը մարդկային աշխարհից։ Թէ խեղճ ու թոյլ անհատները, թէ խեղճ ու տառապող դասակարգերը և թէ մանր հալածական ազգերը, ժողովուրդները պէտք է անպայման անդունդ գլորուին, ոչնչանան, եթէ չեն կարող պատասխան տալ գոյութեան կռիւ անողոք հրամայականին։ Եւ պէ՜տք է թողնել, որ նրանք ոչնչանան, չը պէտք է դիմադրել բնական հոսանքին...

Այդ դժնդակ վարդապետութիւններին ուժ է տալիս և հմբաւաւոր Մալթուսի թէորիան, որ վաղուց, դեռ 19-րդ դարի սկզբներում, ազդարարել էր ուրիշ ձևով նոյն յոռետես եզրակացութիւնները։ „Գոյութեան կռիւ“ գաղափարը Դարվին առել էր հէնց այդ մարդուց, յղացել էր նրա յայտնի աշխատութիւնը կարդալուց յետոյ։ Մալթուս գրել էր ազգաբնակչական շարժումների, նրանց աճումների ու նւազումների մասին և յայտարարել էր, որ գոյութեան կռիւը առաջ է գալիս ճակատագրօրէն ապրուստի միջոցների սղութիւնից, պակասութիւնից։ Նա յաւակնել էր ապացուցել, որ մինչդեռ այդ ապրուստի միջոցները աճում են թւաբանական պրոգրէսսիօնով (1. 3. 5. 7. 9. 11. 13. 15 և այլն) — ազգաբնակութիւնը ձգտումն ունի աճելու գեոմետրիական, երկրաչափական պրոգրէսսիօնով (1. 2. 4. 8. 16. 32. 64. 128 և այլն։ Եւ քանի որ այդպէս է,—ասում էր Մալթուս—բնականաբար պէտք է միշտ թագաւորէ աշխարհի մէջ պատերազմը, մարդասպանութիւնը, մանկասպանութիւնը, սովը, համաճարակ հիւանդութիւնները և ամեն տեսակ աղէտներ ու պատուհասներ, որոնք հանդիսանում են իբրև կանխիչ, փրկարար միջոցներ հասարակական առողջապահութիւնը հոգացող, ապահովող։ Նրանք արգելք են լինում մարդկանց չափազանց բազմանալուն ու բազմանալուն։ Նրանք ձգտում են սանձել, պահպանել ազգաբնակութիւնը այն սահմաններում, որոնք շատ թէ քիչ համապատասխան են ապրուստի սուղ միջոցներին...

Բոլոր ոճիրները, պատմական իրականութեան բոլոր արհաւիրքները սրբագործւում՝ են գիտութեան հեղինակութեամբ, արդարացւում են բնութեան ֆատալ, ճակատագրական տնօրինութեամբ։

Եւ նկատենք, որ այդ դաժան, չարագուշակ գիտականները պատկանում են բոլորն էլ իշխող դասակարգերին, ձգտումն ունին գիտակցաբար կամ անգիտակցաբար պաշտպանելու այդ դասակարգերի աւանդական առանձնաշնորհումները, հաղորդելու նրանց՝ անքննադատելիութեան և յաւիտենականութեան դրոշմը։

Տեսնենք, սակայն, թէ որքան հիմնաւոր և իրաւացի են այդ սարսափելի դիագնոզները (ախտաորոշում) և այդ յոռետես գուշակութիւնները։

Եւ նախ յիշելու ենք այդ բոլոր գիտականների վարպետին, գիտութեան հանճարեղ վերանորոգչին։ Ի՞նչ էր մտածում ինքը՝ Դարվին... Բաժանո՞ւմ էր նա այն մռայլ տարակուսանքները հասարակութիւնների զարգացման վերաբերմամբ, որ ծանուցւում են իր մոլեռանդ աշակերտների բերանով։ Ընդունո՞ւմ էր նա „գոյութեան կռիւ“ օրէնքը մարդկային հասարակութիւնների մէջ՝ այն ձևով, ինչ ձևով նա թագաւորում է անասնական և բուսական աշխարհներում։

Ամենևին։ Նա զատում է — բաւականաչափ խստօրէն—մարդկային և կենդանական աշխարհները։ Մինը գիտակցութեան աշխարհն է, միւսը՝ անգիտակցութեան։ Մինի մէջ թագաւորում է անհաշիւ, տարերային բնազդը, միւսի մէջ՝ խորհող, հակազդող միտքը, իմացականութիւնը։ Անդունդ կայ երկուսի միջև, թէպէտ և մինը միւսի շարունակութիւն է, թէպէտ և ասունի ու անասունի տարբերումները լոկ աստիճանի տարբերումներ են, ոչ էութեան։

Դարվին ասում էր, որ գոյութեան կռիւ անողորմ օրէնքը միահեծան տիրապետում է միմիայն բնազդի, անգիտակցութեան, անասնութեան աշխարհի մէջ, մինչ մարդկային աշխարհում, էволիւցիայի բարձր աստիճանների վրայ, հրապարակ են գալիս այլ գործոններ—գիտակցական էութիւնից բղխող—որոնք միջամտում են գոյութեան պայքարի մէջ, մեղմում, փոփոխում են նրա վայրագ ու դժնդակ բնաւորութիւնը և դառնում են պրոգրէսի, առաջխաղացութեան նոր ազդակներ։

Մարդկութիւնը չի կառավարւում բացառապէս օրգանական—բուսական-անասնական—կեանքի օրէնքներով. նա ունի և իր սեփական զարգացման ու առաջադիմութեան օրէնքները։ Եւ այդ այն պատճառով, որ նա իմացական, գիտակցական մի գոյութիւն է։

Կենդանին չի կարող ազդել շրջապատող միջա-

վայրի վրայ, նրա գոյութիւնը միանգամայն կրաւորական է և նա հլու, իներտ կերպով ենթարկւում է բնութեան բոլոր ազդեցութիւններին ու արհաւիրքներին։ Մարդը — որովհետև օժտուած է կամքով ու գիտակցութեամբ — ազդում է և հակազդում իր բնական շրջապատի վրայ, փոփոխում է և ըստ կարելւոյն յարմարեցնում այն՝ իր գոյութեան պահանջներին։

Կենդանին չի արտադրում, չի ստեղծում նիւթական ու այլ բարիքներ, նա միայն սպառում, ոչնչացնում է։ Մարդը ոչ միայն արտադրում է, այլ և ընդունակ է իր ճկուն, հնարագէտ իմացականութեան շնորհիւ, անվերջօրէն աճեցնել իր աշխատանքը, արդիւնագործութեան ծաւալը, արդիւնքները։

Այդտեղ է և պատասխանը մալթուսական բանդագուշանքներին։ Անգլիացի պատկառելի հոգևորականը (Մալթուս) սխալւում էր նմանեցնելով մարդկային գոյութիւնը կենդանականին։ Կենդանիներն ու բոյսերը, արդարև, կռիւ են մղում իրարու միջև, որովհետև պակասում են ապրուստի միջոցները, որովհետև կայ վիթխարի աններդաշնակութիւն, անհամապատասխանութիւն ծնունդի և սնունդի միջև... Ծնունդը հսկայական է, մինչ ապրելու միջոցները — համեմատաբար շատ սահմանափակ։ Եւ կոտորածը մղւում է — անդուլ ու բնաջնջող կոտորածը — մինչև մի յայտնի հաւասարակշռութեան հաստատումը։

Այլ բան է մարդկային քաղաքակիրթ հասարակութիւնների մէջ։ Այդտեղ միմիայն բնութիւնը չէ արտադրողը, այլ և իրենք մարդիկ։ Այդտեղ միմիայն կոյր, տիեզերական ուժերը չեն ստեղծագործում ապրուստի ու վայելումի միջոցներ, այլ նոյն ինքը՝ մարդկային հանճարը։ Եւ ո՞րպիսի տիտանեան ծաւալով.. Նայեցէ՛ք միայն այս մի տասնեակ դարերին։ Դիտեցէք միայն քաղաքակրթութեան այս կարճատև էւոլիւցիան՝ Հռոմի անկումից ի վեր, կամ թէկուզ վերջին դարում.. Կարճատև, անշո՞ւշտ... համեմատած ժամանակի այն անեզր ովկիանի հետ, որ պարփակում է մարդկային բովանդակ պատմութիւնն ու նախապատմութիւնը... Ի՞նչ խօլական թռիչքներ — նիւթական և մտաւոր առաջադիմութեան. ո՞րպիսի լեռներ մարդկային արդիւնաբերութեան, տեխնիկի, ճարտարարուեստի, ամեն տեսակ հրաշալիքների, ամեն տեսակ գիտերի...

Եւ չի սպառւել այդ հնարագէտ հանճարը. նա շարունակ գործի վրայ է քիմիական, ֆիզիքական լաբորատորիաներում, նա շարունակ տնքում է և միշտ նոր-նոր զմայլելի գիտեր է ծանուցանում բազմաչարչար մարդկութեանը։ Մի օր կը գայ, երբ անգամ հացը — մարդկութեան ամենատարրական սնունդը — կը կարողանան արտադրել առանց հերկելու և ցանելու, քիմիական սինթեզների ճանապարհով, ինչպէս որ արտադրել են բազմաթիւ ուրիշները նոյն գիտական մեթոդով... Մի օր կը գայ թերևս, որ Սահարայի արևակէզ անապատում և ծովերի, ովկիանների անհունութեան մէջ կը հաստատուին խիտ, հսկայ ազգաբնակութիւններ, ընտելացած միջավայրին, սովորած պայքարելու բնութեան ձախորդ տարկանոնութիւնների դէմ... սովորած նոյն գիտական մեթոդից, նոյն յարաճուն, արդասաւոր, ստեղծագործող իմացականութեան շնորհիւ։

Մարդիկ կարող են աճել, բազմանալ, որքան կարող են, երկրագնդի ազգաբնակութիւնը կարող է խտանալ, բազմապատկւիլ նոյնիսկ երկրաչափական պրոգրէսիօնով — ապրուստի միջոցները միշտ՝ կը բաւեն, սովամահի ու մարդակերութեան վտանգ երբէք չի լինի... Նա կարող էր լինել միայն նախնական վայրենի աշխարհներում, երբ մարդկային իմացականութիւնն ու աշխատանքի գործիքները իրենց սաղմային վիճակում էին... Նա կարող է սպառնալ և ներկայ բուրժուազական քաղաքակրթութեան մէջ, երբ արդիւնաբերութեան հսկայական գործիքները և բոլոր հարստութիւնները մենաշնորհ են մի ձրիակեր փոքրամասնութեան ձեռքում, երբ բոլոր գիտերը, մարդկային հանճարի ամենամեծ ստեղծագործութիւնները սեփականութիւն են դարձել միմիայն այդ կեղեքիչ փոքրամասնութեան... Բայց նա չի լինի ապագայում, երբ բոլոր կապիտալներն ու հարստութիւնները կը դառնան սեփականութիւն աշխատաւոր ժողովրդի, երբ բոլոր գիտերն ևս կը ծառայեն այդ ժողովրդին, կ'օգտագործւին հաւասարապէս բոլորի համար...

Մալթուսականութիւնը կեղծ է, անկայուն։ Անկայուն է և „սոցիալական դարվինիզմը“ իր մռայլ, յոռետես ծանուցումներով։

(Կը շարունակւի)

ՄԱՄՈՒԼ

***

Հռոմի սոց. կենտրոնական օրգան „*Avanti!*“-ն հրատարակել է իր ծննդեան համարում մի կոչ-յօդուած Ֆլորենցիայի պրոֆէսօր Վիրջիլիօ Վերդարօի՝ „Ցարիզմը հայ ժողովրդի դէմ“ խորագրով։ Յօդուածագիրը խօսում է Հ. Յ. Դաշնակցութեան դէմ սկսած արշաւանքի մասին, նկարագրում է Նովոչերկասսկի բանտարկեալների զրկանքները և կոչ է անում Իտալիայի սոցիալիստներին՝ պաշտպանելու „Դաշնակցութեան“ գաղը։

Նման յօդուածներ հրատարակեցին պարիզեան „*Humanité*“-ի և „*Frankfurter Zeitung*“-ի մէջ։

*

Նիւ-Եօրկում հրատարակւող Հիւս. Ամերիկայի սոց. կենտրոնական օրգան „*The Call*“ (Զանգ) թարգմանաբար հրատարակել է Հ. Յ. Դաշնակցութեան Տեղեկագիրը, ներկայացուած Կոպենհագի Սոց. Համագումարին։

ՊԱՐԻԶԵԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՉԸ

Մի խումբ համբաւաւոր ֆրանսիացի գրողներ և հրապարակախօսներ նորերս հրատարակեցին տպւած մի կոչ, որով հրաւիրում են ֆրանսիական գրողների ուշադրութիւնը Նովոչերկասսկի հայ բանտարկեալների և մասնաւորապէս հիւանդ ու հալածական Աւետիք Ահարոնեանի վիճակի վրայ։

Այդ կոչի մէջ հակիրճ ձևով պարզաբանւում է Հ. Յ. Դաշնակցութեան կատարած դերը Ռուսական Հայաստանի մէջ, յիշատակւում է, որ 1905—1906-ին թաթարական հօրդաների դէմ մղած իր կռւով, այդ կազմակերպութիւնը փրկեց կովկասեան քաղաքակրթութիւնը. շեշտւում է, որ Նովոչերկասսկում պատրաստող դատը ամենամեծն է „ստօլիպինեան ճնշումների“ տարեգրութեան մէջ, որ մեղադրւած են մօտ 500 հոգի, որ

կանչելիք վկաների թիւն է մօտ 1500, որ դատի տակ է կովկասահայ մտաւորականութեան élite-ը, ամենաընտիր մասը և այլն։

Կոչի հեղինակները առանձնապէս ծանրանում են հայ ժողովրդական գրող Ահարոնեանի վրայ, նկարագրում են նրա հիւանդ ու յուսահատ վիճակը ռուս բռնակալութեան գռեհիկ սպասաւորների ճանկերում և հարց են տալիս. „արգեօք Ֆրանսիացի գրողներն ու հրապարակագիրները—որ Ագրամի զոհերի առթիւ սկսած պայքարով վաստակեցին այնքան գեղեցիկ մի յաղթանակ—բաց կը թողնե՞ն ներկայ առիթը՝ փրկելու իրենց մի պաշտօնակցին“...

Այդ կոչը—որին սրտանց արձագանք է տալիս եւրոպական մամուլի մի մասը *)—ստորագրած են.

ԱՆԱՏՕԼ ՖՐԱՆՍ	ԷՐՆԵՍՏ ԼԱՎԻՍՍ
ՖՐԱՆՍԻՍ ԴԸ ՊՐԵՍՍԱՆՍԷ	ՎԻԿՏՕՐ ԲԵՐԱՐ
ԺՕՐԺ ԳՕԼԻՍ	ՊԻԷՌ ԿԻԱՌ
ՖԷԼԻՍԵԱՆ ՇԱԼԼԷՑ	ՍՏԷՖՆԼԷՆ

Ա. ՀԵՐՕԼԴ

Ա Զ Դ

Կորել է ներկայ յունուարի սկզբներում մեր հասցէին ուղղուած յանձնարարական մի նամակ։ Որովհետև կասկածներ կան նոյնիսկ ժընէվեան ցուրիչի վրայ և որովհետև վերջին ժամանակներս Ռուսաստանից ու այլ տեղերից ժընէվ գտնուող յեղափոխական անձերի ու մարմինների հասցէին ուղղուած նամակների „կորուստը“, տարաբախտաբար, այլ ևս հազւագիւտ մի երևոյթ չէ,—ուստի կը խնդրէինք, որ անցեալ դեկտեմբերի վերջերին մեզ յանձնարարական նամակ ղրկող և անպատասխան մնացող մարմինը կամ ընկերը անյապաղ տեղեկացնէր մեզ մեզ յանձնարարական նամակ ղրկող և անպատասխան մնացող մարմինը կամ ընկերը անյապաղ տեղեկացնէր մեզ և վերարտադրէր ղրկուած նամակի պարունակութիւնը։

*) Թերթերից՝ *Standard, Daily News, Temps, Frnk. Zeit.*։

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Թիւրօն սպանած է՝

Դամասկոսէն (բանտարկեալներու համար).—„Օծ.“ 108 դուռուս, Եղիա Մասիկեան 50, Յարութիւն Տէմիրճեան 47. 50, Կարապետ եւ Մարճիրոս Դրօշեան 47. 50, Յովսէփ Պարսամեան 40, տօնք. Գրիգոր Իւթիւճեան 40, Պետրոս Սուրիասեան 25, Գէորգ վարդ. Ճանսզեան, Մանասէ Դավաճեան, Ներսէս Մէնկէնէճեան, Գէորգ Տ. Գալուստեան, Սարգիս Տ. Ներսէսեան, Յակոբ Քէնտիրեան, Գրիգոր Գրանեան, Բարսեղ Քէշիշեան, Նեան Տ. Ղազարեան, Գրիգոր Նիկողոսեան, Յարք. Դաւիթեան, Յովհաննէս Ժամակոչեան 20-ական, Մարտիրոս Նանճարեան, Սարգիս Մարաշլեան, Տիգրան Պահատրեան, Խաչատուր Զիլինկարեան, Միհրան Մանիսաճեան 10-ական, Պօղոս Արսլանեան 5, Ամն 4 դրտ.: Դումար 657 դրտ. Պօլսոյ դրամ:

Լիվրպուլէն՝ Խաչ. Մամասեան 125 ֆրանկ:

Պալքանեան Կեդր. Կոմիտէն՝

ԿԱԼԱՅԻ Կոմիտէն 1909 տարեբջանէն. — Հեսեւեալ խումբերէ՝ Անանիս 60 ֆրանկ, Տալորիկ 55, Արարատ 34, Աստղիկ 36, Արարատ 21, Անանիս 31, Արծիւ 55, Գայլ 60, Ծերունի 120, Ամիր. Ղազ.-եանէ 20, Գ. Պաղ.-է 6, Սրճարանի տասը ամսեան հասոյթէն 388. 30 ֆր.: Դումար 912 ֆրանկ 30 սանտիմ:

Լեռնատարի Կեդր. Կոմիտէն՝

1909 ապրիլ 8-էն 1910 փեբրուար 28: — Կոմիտէներէ՝ Նախորդ Տեղական Կոմիտէէն 342 դրտ. 20 փարա, Արեւալուսին 1384. 10, Բլրակ 6946. 20, Բերքառատ 2553, Մեսրոպասան 706, Ենթակոմիտէներէ՝ Անուշաւան 524. 30, Բազէ 495, Բերդորդի 104. 20, Գանաւանդ 988, Բուրատան 153, Դաշտավայր 357, Եփրատ 313, Թաքառ 440, Որսորդ 619, Հայկեան 313, Սրբավայր 651. 10, Տեղական Հ.-ի համար բացառիկ հանգանակած 2610. 20 դրտ.: Դումար 19501 դրտ. 20 փարա:

ՍՊԱՆԴԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԸ

Յեղափոխական այլ և այլ հատուածների պատկանող մի քանի անձեր, կազմակերպելով նախնական քննութիւն Սպանդար Սպանդարեանի դէմ ուղղուած յայտնի մեղադրանքի առթիւ, պարզեցին անտարակուսելի կերպով, որ ռուս ոստիկանական Դեպարտամենտի գործակալ-ագենտ եղել է Սպ. Սպանդարեանի աւագ եղբայրը, Կոնստանդին Սպանդարեան, որ ցենզորի պաշտօն է վարում Օդեսսայում։

1904 թ. յունուարին նա ներկայացել է Պետերբուրգ, մի գլխաւոր լրտես-գործակալի ուղեկցութեամբ, գրւել է իբրև ագենտ, ստացել է դրամ, ուղարկւել է յատուկ յանձնարարութեամբ Կովկաս, պտտել է Թիֆլիս, Բագու, Ալէքսանդրօպոլ և ապա կազմել ու ուղարկել է Պետերբուրգ մի ընդարձակ ցանկ այն հայ գործիչների, որոնք իր կարծիքով վարում են „անջատական“ (սեպարատիստ) շարժումը Ռուսահայաստանում։

Այդ ցանկը ժամանակին կը հրատարակւի „Դրօշակի“ մէջ։

Քննութիւնը ընդունեց դրա հետ միասին, որ խնդիրը վերջնականապէս չի լուսաբանուած։ Կոնստ. Սպանդարեանը վճռականապէս ժխտում է, որ ինքն իբր թէ ներկայացել է եղբօր անուան տակ։ Մնում է պարզել՝ թէ ինչո՞ւ Պոլիցիական Դեպարտամենտի փաստաթղթերում, ինչպէս նաև իրազեկ անձերի կողմից Վլ. Բուրցեվին արուած յայտարարութիւնների մէջ՝ մատնացոյց են լինում խմբագիր Սպանդար Սպանդարեանի վրայ, որպէս ագենտի։

Ուստի քննութիւնը որոշեց—գործի վերջնական պարզաբանութեան համար—կազմակերպել միջկուսակցային յեղափոխական ատեան, հէնց որ կը ստացուին ակնկալւած լրացուցիչ տեղեկութիւնները։

Այս նախնական քննութեան, ինչպէս և ամբողջ գործի, մանրամասները կը հրատարակւին ժամանակին „Դրօշակի“ մէջ։

Տպագրելով ներկայ ազդարարութիւնը—որ ընդունւած է Քննութեան բոլոր անդամների կողմից և հաղորդւած նաև պ. Սպանդար Սպանդարեանին — խմբագրութիւնս յոյս է տածում, որ յետագայ քննութիւնը կը կարողանայ պարզել խնդիրը իր բոլոր պարագաներով և փափագում է, որ ի վերջոյ կասկածի ստւեր անգամ չը մնայ՝ գէթ հայ խմբագրի պատւի վրայ։

«ԴՐՕՇԱԿ»

ԼՈՅՍ ՅԵՍԱՒ

ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆԻ

ՀՈՍԱՆՔՆԵՐ

ԳԻՐՔԸ ԲԱՂԿԱՑԱԾ Է 410 ԵՐԵՍՆԵՐԻՑ

ԳԻՆՆ Է { 3 ՖՐԱՆԿ
12 ՂՐՈՒՇ
1 Ր. 50 ԿՈՊ

Բոլոր հրատարակութիւնների համար դիմել՝

Կ. Պոլիս «Ազատամարտ»-ին։